



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17154

17155


17156

17157

17158

891.99

U-39



3756 w

ԵՐԿԱԾԻՐՈՒԹԻՒՆՔ.

ԿԱՊԻՏԱՆ ՊԵՏՐՈՍ ՄԱԴԱԹԵԱՆԻ

„ՍԵՅԵԱԴ“ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԼՈՅ,

Գր. մասն:



Նախիճ քախուսպա Նուերթէն և Արտեմէն
Նախիճ սովոր և ամբողջ ամբողջ Արտեմէն
Նախիճ մէ մցո բնույթ ուշին գլուխով
Նախիճ մէ մցո Ամերիկ ՀՌ
Նախիճ Ե. Բ. Գ. Ամպին ՀՌ

Ընդէր դու խեղճ սոխակ աղաղակես միշտ,
Միթէ ողբերգուաց օժանդակ ես միշտ,
Երկի զառնութեան դու վիճակ ես միշտ,
Ո՛հ նազելի՝ դու վիճակ ես միշտ,
Ո՛հ սիրելի՝ դու վիճակ ես միշտ:

Դու վարդդ տեսնում ես ամենայն տարի,
Ողբա դու զվիճակ ինձ պէս անճարի,
Միշտ ալլոց ցաւակից լինելն է բարի,
Ո՛հ սիրելի՝ լինիլն է բարի,
Ո՛հ նազելի՝ լինիլն է բարի:

Քո սսոխդ է միալն խիստ ալգեպանն,
Զիս ատէ իմ եարի գիփ ազգականն,
Շատ լոգւոց հանելով ելաւ իմ ջանն,
Ո՛հ նազելի՝ ելաւ իմ ջանն,
Ո՛հ սիրելի՝ ելաւ իմ ջանն:

Տարէնը մի անգամ չեմ տեսնում եարիս,
Կարօտ եմ մնացել այն սիրտը քարիս,
Արի դու մէկ խրատ տնը սիրահարիս,
Ո՛հ սիրելի՝ տնը սիրահարիս,
Ո՛հ նազելի՝ տնը սիրահարիս:

3698
47

ԱԵԼԵԱԴՆ Եմ ընկղմած արտասվաց ծովում,
Զովութիւն չեգիտ իմ սիրտս ոչովում,
Սիրահարք միշտ իրանց օրն են նզովում,
Ո՛հ նագելի՝ օրն են նզովում,
Ո՛հ սիրելի՝ օրն են նզովում:

* *

այժմ սպասարկ թափառ ճրած ար դժբահ
այժմ ու թարման զաւորդացրա մեջ մի
այժմ ու այսի ար մասնելուն ուր մայտ
այժմ ու թաման ար մյաբառ շի

Ե Ր Փ.

Ա Ր Բ Ո Ւ Թ Ո Չ Ո Ւ Ն Ն.

Ընդէր են կոչում քեզ միշտ չարագուշակ,
Միթէ քոյ լեզվումըդ չ'կալ բարի լուր.
Մարդկային ազգն է քեզ անչափ ներհակ,
Քոյ ձախնդ լինելիս լինում է տիսուր:

Ընդէր ես դու լաճախ երգում կըդայ վալ, (*)
Զը կարծես թէ ամեն ազգ է անբաղդ չալ,
Որ ահա հենգ դար է կոչումէ վալ, վայ,
Ցաւոյն դեղ չի դանում կոծելով իզուր:

Միթէ ձեր հալըենիք է լոկ չայաստան,
Միթէ այլ աշխարհում ձեզանից չկան,
Որ նրանց գլխոյն էլ մէկ անգամ վայ տան,
Եւ ձեն նրանց ատելութեան հուր:

(*) ըուոց երգելոյ եղանակն է սկըդայ վա՛յ, կըդայ վա՛յ որ յայտնի է ամենեցուն:

Դուք էք չայաստանի հիմայ բնակիչքն,
Դուք էք և մաշկաթեւք նորա սփոփիչքն, ասիտա ծոսուռն
Դուք եղէք մեր հայոց անգութ դահիճքն, մզքու մարտէն
թէ սուտ է բաս նորա փառքը մւր է ուր ասու զրու թէն

Անիծվէք ողաճայոց անգին աշխարհն,
Արտա Քանդելով ցիրուցան արարիք քարն,
Ակա Սէլեան հայաստանի վէրքերի ճարն,
Միայն Միաբան լինելն է և սէրն ամուր:

* *

Ե Ր Փ.

Ա Ր Տ Ա Տ Ր Ա Կ Թ Ո Չ Ո Ւ Ն Ն.

Կանաչ ծառոյ ոստին միամիտ նստած՝ նախարձ յախ է գ
երգում ես նազելուց սիրովը տատրակ:
Զես ասում թէ հայքը ընչու են տրտմած,
Նոքա լոյժ անբաղդ են քո քովը տատրակ:

Զմռան ցուրտն է քոյ նեղ վիճակն,
Հայը միշտ տանջվում է նեղութեան տակն,
Արքայ ես երբ ծաղկում է մանուշակն,
Զիկպնում է գարնան քեզ հովը տատրակ:

Մէկ դու ես մէկ հաւդ թւով էք երկու,
Տարէնը ածում էք միայն երկու ձու,
Էլ ընչու պիտումէ երբէք զգաս դու,
Հայերի ծարաւը, կամ սովը տատրակ:

ունչու (1)

ունչու (2)

ՄԵԿ նալիք ցաւելով գոյւ Հայոց ազգին առասպան գէ գոյն
կնճռոտած ճակատին ցաւալի սրտին, մինթքան և գէ գոյն
Աշխարհի տէրն էր այժմ է չնչին ըրան զնն դժբ գոյն
ՄԵԿ ողբ ասա նորա սրտովը տատրակ:

Արդարական Արքանից մինացիր գոյւ արտասուքն,
այսոց Դուցէ փրկէ զմեզ՝ քոյ արած սուգն,
Արդարական Արքանից մեռել է մնացել Սէ շուքն,
Արդարական Արքանից մեռել են ան ծովը տատրակ:

* * *

ԹԱԶՆԻՍ ՀԱՅԵՐԵՆ.

ՎԱՍՆ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ ԲԱՂԴԻՆ.

Կոյր բազդ ես քոյ ձեռից շատ եմ գանգատել,
Թէ չկայ քեզանում երբէք խղճմտանք, ճառատ յառած չամայ
Աստուած էլ գիտէ որ արդար եմ դատել, չամայ ոտ նարդ
Զի մարդիք ՚ի քէն շատ կը եցին, գրկանք:

Նուի(*) պէս առիւծին տարակիր արիր,
Յիի(**) պէս առիւծին թազադիր արիր,
Աւզապապն Թահմազին Շահ Նադիր արիր,
Քոյ ընտրած անձինքը էշք են իշապանք:

Անարժանք ծայրագոյն վառաց հասին քև,
Ստացան զադամանդ մանեակ՝ ՚ի պարզեւ,
Քեզ բարի կոչողի դէմքը լինի ու,
Տես որքան լիմարներ քեւ եղեն իշխանք:

(*) Ներակա:

(**) Յովհաննէս:

Կամեցալ աշխարհին քոյ գործդ լալտնել, այս զա օնն աշ
Դու ձգար զիկ ՚ի ագուր փորձութեան անել, թ յաճմք արած
Ներիր զի կամում եմ երեսիդ ասել, բամբակ միտիգ ըզզի
Թէ էշ ես որ քոյ դիկ ընկերքդ են իշանքան մշմանան մ

Ինչ վնաս ինձ տուիր, անիրաւ բաւ է,
Քոյ յոյսը գլուխովին ջախջախած նաւ է,
Սէ յեա գիմեղքերը թէ Աստուած քաւ է,
Քեզանից չի կրիւ երբեք կասկածանք:

Չամրաց լուս ի յառ զմին պատ մերով այսին
Հայու յիմէ բայր է ին * * * հայիս սկսով
բայն յամպատ յառ զմիւն մայ մայն է ու

ՆԵՐԲՈՂ.

Ի ուստիւ Ռորին Տառընութաղնութէան Առ Եղիսէսուսին Եւսէսի
առ Աշխարհին Արքապատու կատալուի: յաճմք գէ զա մ
ամիս ի ու յու այր առու մըքրու մցու ընմէ մ
Երանի ազգին որ ունի այսպէս խաշնարօտ,
Այսպէս հովուի խաշինքն ընդէր կլինին երկչուանին է զա
Ովոք նորա օրհնեալ աշին մերձենայ յոյժ մօտ,
Կըզայ նրանից նոյն ժամայն վարդապետական հոտ,
Զի չէ միայն լոկ սեակիր, այլ կատարեալ մարդ—
Եկեղեցւոյ զարդ:

Տեսեալ զնա Նուրիացւոց իբրև սուրբ մատազ—
Լիդէին զծործ նորա որպէս ոչխարք զադ,
Ի տես նորին ժողովեցան՝ կոյր, համը կազ,
Նա հայրօրէն յուսագրէր՝ նրանց հեզ, խազազ—
Զի չէ միայն լոկ սեակիր այլ կատարեալ մարդ—
Եկեղեցւոյ զարդ:

Ահա մեծ ալր ահա անկեղծ մարդկալին եղբալը,
Սովաւ ցնծայ Քրիստոսաւանդ սուրբ Հաւատոյ մայր,
Որբոց սփոփիչ ալրեաց սանտեաց սրտացաւ Հայր,
Դ տեսանելն տնանկաց սուր առեալ ողբայր:

Զի չէ միայն լոկ սևակիր այլ կատարեալ մարդ—
Եկեղեցւոյ զարդ:

Մարդ հոգեոր կարէ լինիլ մարդ կատարեալ ոչ,
Ամեն կերպիւ ըստ Պողոսի սա է երկնակոչ,
Սովաւ կարեն սուրբ օրէնք տալ ՚ի նորոյ բողբոջ,
Այսպէս հոգուի ոտին ով է կարող լինիլ խոչ,
Զի չէ միայն լոկ սևակիր այլ կատարեալ մարդ—
Եկեղեցւոյ զարդ:

Երջանիկ էք ուղղադաւանք՝ զի ձեր է այս պետ, ո՞նց
Ո՞նց չի ցնծալ այն ազգը որ ունի այսպէս դէտ,
Սէ յեա արի ուղիղն ասա դու Հալ ես թէպէտ,
Քոյ կեանքումդ շատ չես տեսել այսպէս վարդապետ,
Զի չէ միայն լոկ սևակիր այլ կատարեալ մարդ—
Եկեղեցւոյ զարդ,

ՅԱՆԿԱՐՄԱՆԻՆ ԽՈՍՔ.

Ո ընդդէմ կամաց իմոց պտոյտ առնող բաղդ թիւրընթաց,
Ալժմ միտք իմ առանց կամք կամին լինիլ ոնց պիտի արած:
”Սէ ՅԵ Ա. Դ.“

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ.

Գ Ի Կ Ղ Ա Կ Ա Ն Ե Կ Ա Կ Ա Ն Ա Կ Ի Կ Բ.

Գիւղական մի կայր խիստ անխճմտանք,
Իրան իշոյն միշտ տալիս էր տանջանք,
Սոված պահելով՝ եղել էր տկար,
Մարմինը անմազ՝ էր քոստ նիհար,
Զի ուտելիքն է առիթ գերութեան,
Սա է խկական պայման բնութեան:

Մէկ օր նա զէշն բեռնեալ ցորենով .
Գնաց ջրազաց՝ անվրդով հոգւով, ո փէշ
Երբ որ ջաղացից դառնալ էր ուղում, ||
Էշը նստեց մէկ՝ խոր ցխի միջում, ||
Գիւղականը չէր կամում ցեխ մտնել, ||
Նորա կանգնմանը մէկ հնար գտնել, ||
Ուղեց համոզել՝ զնա խօսքերով,
Նորա նախնական մեծ մեծ զործերով:

Ասաց ականջ գիշ՝ պարոն աւանակաց
Եկ դու մի լինիք՝ կամքիս հակառակաց
Քոյ նախնիքդ տիփ՝ էին փառասէր, ||
Ընդ թագաւորաց՝ առնէին միշտ սէր,
Մանաւանդ արքայք՝ հին հաբելօնեան,
Յաւէտ նստէին՝ քոյ նախնեաց վերան, ||

Թէ և ունէին՝ երիվարք և կառք,
Յէշ նստելն էր՝ նրանց համար փառք:

Պուլ այն մեծանունի իշոց մերութղն ես! Ի
Հաւատացիր որ՝ սուտ չեմ ասում ես,
Ամօժէ է արի վերկաց արդ ցեխից,
Քոյ նախնեաց յայտնի փառաց չափը լից,
Եթէ վերկենաս՝ փութով տուն գնամ,
Երկու բուռն աւել՝ քեզ գարի կտամ,
Յետ այնու ես քոյ գինդ իմացեալ՝
Դարմանով խոտով՝ մսուրդ լցեալ՝
Քեզ ամեն բանից աւել կը սիրեմ, ԱՅՍ
Տիփ ծառաներիս՝ խիստ կը պատուիրեմ,
Որ ամենեքեան՝ քուրսիրտ շահեն, ԱՅԺ
Ամենայն ուրեք՝ պատիւզ պահեն, ԱՅԺ
Դէ դուրս եկ յեխից՝ աղամ Աւանտ,
Մի լինիր իշանց՝ միջին խալտադակ:

Եշը իւր տիրօջ՝ տուաւ պատասխան,
Թէ „արի մտնենք՝ քեզ հետ դատաստան,
Տեսնենք դու Բաշ շատ յանցաւոր թէ ես,
Քարասիրտ մարդ չեմ՝ տեսել ես քո պէս,
Բեռան տակին եմ՝ ես տիւ և զիշեր,
Գիւղումը շատունք պահումեն էշեր,
Կարելեն տուել՝ մախմուրից փալան,
Օրը կէս լըտել՝ չափ գարի կը տան.

Գումիշտ ուտումեմ՝ միս, իւղ և մածուն,
Խսկես քոյ ձեռից՝ չունիմ հանգիստ քուն,
Տարին մինչ ցգլուխ՝ համարեա պաս եմ,
Զեմ վախում խօսքը երեսիդ կասեմ,
Զի կարծես ես այս՝ յեխից վերկենամ,
Որքան կենդանեմ՝ աստ պիտի մնամ:

Տէրը միտք ունէր՝ զէշն խիստ գանել,
Միայն չէր ուզում՝ յեխիը մտանել
Կրկին սկսեց՝ խօսիւք համոզել,
Կամելով իշոյն՝ խրատ քարոզել,
Ասաց „երկի՝ պարոն չես լսել,
Որ Բաղաամը՝ մէկ էշ ունեցել,
Երբ ուզեց անէծք՝ տալ իսրայէլին,
Նրան խրատեց՝ այն էշ յարգելին,
Ասաց միթէ չես՝ տեսնում հրեշտակն,
Որ կամի զմեզ՝ տալ ոտից տակն,
Դու ոնց ես կարող՝ սուրբն անիծանել,
Անկանիլ՝ ի գուբը կորստեան անել.
Յայնժամ Բաղաամ՝ իշոյ խօսքովն՝
Զգացեալ մեղայ՝ կոչեց սրտովն,
Փոխանանիծից՝ օրհնեաց զիսրայէլ,
Քոյ նախահայրդ՝ եղեւ նմա արգել,
Տես թէ նա ո՞րքան հանճարեղ էշ էր,
Կարես ասել՝ քոյ՝ նախահայրդ չէր,

Կամ ալն էշը՝ որ՝ Քրիստոս Տէրն մեր
Նստեալ մեծ վասոօք՝ Սաղիմ էր մտէր,
Միթէ դու նրան՝ արենակից չես,
Որ ցեխի միջին՝ պարկել ես էգպէս.
Փռւթացիր օրհնեալ՝ տղմիցը վերկաց,
Որ արտա չէինիս քոյ փալուն նախնեաց,
Ինչ ժառանգ նախնեաց՝ պատիւը կորոյս,
Նորա խորդութեան՝ չկայ տարակոյս:

Էշը իւր տիրօջ խրատին չի անսաց,
Յեխի մէջ հանդարտ՝ նա մնաց նստած,
Գիւղացին տեսաւ՝ որ էլ չկայ ճար,
Յեխը մտնիլը՝ եղիտ նա յարմար,
Եմուտ ՚ի տիղմը՝ փայտ առեալ ձեռքն,
Սկսեց ճարթել՝ իշոյ ոսկերքն,
Էշը չի կարաց՝ դիմանա ցաւոյն,
Յարուցեալ յոտին՝ կանգնեցաւ իսկոյն,
Բեռնը վազեվազ՝ տարաւ տուն Հասոյց,
Այս խելքը իշոյն՝ սուրբ փայտը ուսոյց.
Եթէ ոչ խրատից՝ չէր ծնիլ օգուտ,
Բաց ՚ի փայտիցը՝ ամեն բան է սուտ:

Փայտն է յաշխարհի՝ մեծ կանոնադիր,
Նովաւ կարող է՝ ծոլը լինիլ միր,
Էնդուր են ասել՝ թէ միայն փայտիւ,
Կարէ մարդ տիրել՝ աշխարհին լրեւ:

Ինչ ազդ ծոլութեամբ՝ յիսոյ մէջ նստեց,
Խրատը չի օգնել՝ նորա դեղն է ծեծ,
Մէկ ազգի է ալս՝ առակն օրինակ,
Որ բարի խրատուց՝ է անընդունակ,
Ասա դու ստրուկ՝ եղած չալկազնին,
Թէ դու որդի ես Հայկ մեծ Դիւցաղնին,
Նա այս բանին չի երբէք հաւատալ,
Կուզէ յիսոյ մէջ՝ ընկղմած մնալ,
Ինչ սրտում չկայ՝ նախանձ եռանդ,
Նա կալանաւոր է աշխարհը բանդ,
Սէյեա ընդէր ես մեղագրում չալին,
Նորա գերողն է՝ ձեռն Աստուածային:

*

*

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐՉԱԿԱՆ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ:

Դու անխախտ պատկեր՝ նախկին ժողովոյն,
Զոր հարք կարգեցին՝ բանիւ սուրբ Որդւոյն,
Այլք փոփոխութիւն՝ առին գոյն զգոյն,
Դու հաստատ մնացեր՝ շնորհիւ սուրբ հոգւոյն:
Լուսաւորչական սուրբ Դաւանութիւն,
Ո՞վ կարէ չտալ՝ քեզ հաւանութիւն:

Դու ես Քրիստոսից՝ աւանդած վէմն,
Ոչ ոք չի կարաց՝ շարժել քոյ բեմն,
Զար վիճակ գտաւ՝ միշտ քոյ ընդ դէմն,
Հայք թողեալ նսեմն՝ առին վսեմն:
Լուսաւորչական սուրբ Դաւանութիւն,
Ո՞վ կարէ չի տալ՝ քեզ հաւանութիւն:

Գրիգոր, Յուսիկ և Արիստակէս,
Վրթանէս, Ատհակ և մեծ Ներսէս,
Նոքա մեղ թողեալ՝ ելին յաշխարհէս, Ի պատ թէ
Բայց Հայք չիթողին՝ նախնականն ծէս: Ժայռ զի
Լուսաւորչական և այլն: ճարդ ժայռն այր առ

Հայաստան ետես՝ նեղութեանց օրեր,
Զի որդիք նորա՝ չունէին առւրբ սէր
Ցիրուցան եղեն՝ զեդ ոչխար անտէր,
Միայն անփոփոխ՝ մնաց քոյդ պատկեր:
Լուսաւորչական և այլն:

Անկարծիք այժմեան՝ բեմիդ պաշտօնեայք,
Ոչ գործով, միայն՝ լոկ բանիւ են Հայք,
Կոչմամբ գիտունք են՝ իմաստիւք տղաւք,
Անցին գնացին՝ արժանի փեսայք:
Լուսաւորչական և այլն:

Հերձուածք ընկղմել՝ կամին քոյ նաւն,
Զիք մարդ որ ընտրէ՝ սուտ և իբաւն,
Որբոց ովկ կտալ՝ բարի համբաւն,
Սէյեա զեդ գիտէ քոյ սրտիդ ցաւն:
Լուսաւորչական՝ սուրբ Պաւանութիւն,
Ովկ կարէ չի տալ՝ քեզ հաւանութիւն:

* * *

Ի ՊԻՄԱՑ ԹՐՉՆՈՑ ԱՌ ԱՐԺԻՒՆ.

Երանի մեղ Արծուի հզօր՝ է չ մեծ զմանոյ ոչ
Ունիմք քոյ պէս տէր ահաւոր,
Գոլով անչափ արդարագատ,
Ոչ հօր աչառես ոչ եղբօր:

Երբ չափես կամար զերկնային,
Աչք մեր պշեալ ՚ի քեզ հային,
Չ' գիտես զցուրտ բևեռային,
Զի ուժեղք են միշտ կամկոր:

Յորժամ լսեմք ձայն քոյ ահեղ՝
Սարսին դողան սիրտք մեր անմեղ,
Ծառալ քոյ եմք հլու, ուշեղ,
Տարի, ամիս, շաբաթ և օր:

Ո՞վ ետ արդեօք քեզ այդ վիճակ,
Նեղել զմեղ տեսակ տեսակ,
Դու իշխան ես չես աւազակ,
Արժան չէ քեզ բնութիւն ստոր:

Դու ինքդ ես մեղ պէս թռչուն,
Մեր մէջ շատ գոյ քեզնից գիտուն,
Ի՞նչ արտօնութիւն է որ դուն,
Ունիս լայն և անյագ որկոր:

Աերեա իշխան արդարադատ,
Զանտեղին մեր ի քեն գանգատ,
Մեք ստրուկ եմք դու պայազատ,
Այս կանոնը հին է չէ նոր ձանց բան մասով
ուղարկու դժու ուժը լոց զնիված

Ոսոխք մեր են, մարդիք; գազանք,
Ի կորուստ մեր առնեն միշտ ջանք,
Քոյ անունն է մեզ լոյս և կեանք,
Եւ ապաստան ամենազօր:

Մեր չար ու բարին չի գիտենք,
Կամք քոյ է մեզ կարգ և օրէնք,
Դու չի լինիս մեք ոչինչ ենք,
Կը կորնչիմք մինչ ցըկէս օր:

Մեր վիճակը քեէ հաստատ,
Ի քեն է մեզ նդրութիւն ազատ,
Այս բանի վկալն է Սէյեա ադ,
Որ ծառայէր ի Վայոց-Զոր:

*

մասին ուժը գուրգու ուժ ի
մասին մասն ուժը յարձի

ԱԹ ԲԻԻԼ ԲԻԻԼ ԹԹԶՈՒՆՆ.

Հասեալ ժամանակ գարնան,
Եղկելի բիւլբիւլ էր կուլաս.
Քոյ կարմիր նազելոյդ բացման,
Եղկելի բիւլբիւլ էր կուլաս:

Մի գաղել ցաւդ ինձ ասա,
Յաւը ծածկելը վնաս ա.
Ես էլ քոյ վիճակիդ հասայ,
Եղկելի բիւլբիւլ էր կուլաս:
Ես էլ եմ քեզ պէս սիրահար,
Մերն է սիրոյ ցաւոյն խսկ ճար,
Փառք Աստուծոյ գարնան հասար
Եղկելի բիւլբիւլ էր կուլաս:

Միմիայն տասնուշէկ ամիս,
Դու սիրելիդ չես տեսնալիս,
Իսկ ես միշտ կարօտ եմ լալիս,
Եղկելի բիւլբիւլ էր կուլաս:

Դու հեռու չես բուրաստանէն,
Բաս խեղճ Հայերը հնցանեն,
Որք ցրուեցան Հայաստանէն,
Եղկելի բիւլբիւլ էր կուլաս:

Մէյեադն եմ ուղղափառ Հայ,
Ցերեկս ողբ գիշերս վայ,
Երջանկութեան Հայոց երկբայ,
Եղկելի բիւլբիւլ էր կուլաս:

Այսուհետ զիս ամսի ժնանամբ ովէն
* * * այսուհետ ժնանամբ զամանակ ովէն
Այսու և այսու զիս ամ մասի սկզբան
զամանակ ովէն այսու զիս զամանակ

Պ Ա Ր Թ.

Մարդն է 'ի բնէ մէկ այնպիսի ստեղծուած,
Որ նորա պէս բան չի ստեծել Աստուած,
Ինչ արարած որ գոյ լուսնեակից ցած,
Նա բռլորին կարծումէ իւր ստացուած,
Մարդիցը ինչ որ ծնանի չէ զարմանք:

Կա չի պահեց պատուէրը իւր Արարչին,
Փառք պատիւը կորոյս պատճառն էր կին,
Որ չի կարաց դիմանալ խարման օձին,
Սնոտի կամօք կարօտ մնացին դրախտին,
Մարդիցը ինչ որ ծնանի չէ զարմանք:

Երբ որ լսեց Աստուածալին անէծքը,
Չիմացաւ ոնց կուլինի գործոց ետքը,
Պիտանին ետ գնեց իրան անպէտքը,
Ալսպէս բանը կանեն միայն տգէտքը,
Մարդիցը ինչ որ ծնանի չէ զարմանք:

Մարդը իրան սնոտի կեցութեան համար,
Մինչ ցիւր մահը չարչարվումէ անդադար,
Իւր հոգեկան ցաւոյն չի որոնում ճար,
Չէ իմանվում հանճարեղ է թէ լիմար,
Մարդիցը ինչ որ ծնանի չէ զարմանք:

Մէկը կամումէ լինիլ տէր աշխարհի,
Միւսը ժողովումէ անհամար բարի,
Մէկը զէնքը դնէ անմահից չարի,
Ալսպէս վարի նա օր, ամիս և տարի,
Մարդիցը ինչ որ ծնանի չէ զարմանք:

Ո է լ ե ա ղ մարդկան որոգալթից զգուշ կաց,
Նորա ամեն որպիսութիւնը իմաց,
Թոյն գոյ միջին չուտես թէ որ տան քեզ հաց,
Մարդոյ ամեն արարմունքն է սուգ և լաց,
Նրանից ինչ որ ծնանի չէ զարմանք:

*

*

Խօսահցութեան Ակաւութիւն ընտ միոց Հարդարեան:

Ս է Յ ե Ա Դ :

Աստուած օգնական վարդապետ բարի,
Դեղնած գոյն ձեր է նշան տկարի,
Ի՞նչ դրութեան են ձեր միաբանքն,
Ի՞նչ կերպ են վարում իրանց սուրբ կեանքն,
Վասն զի այժմեան ժողովրդականք,
Ո՛չ տուրք ունին ո՛չ պայծառ խղճմտանք,
Թէ տարով մնաք վանքում, սոված,
Նոքա չեն տալ ձեզ ուտելոյ լոկ հաց,
Զի սէր նոցա առ գասն հոգեոր,
Անչափ սառն է և անասելի չոր:

Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ :

Աստուած պահապան սիրելի Ս է լ ե ա ղ,
Զերմի ձեռիցը նոր եղէ ազատ,
Սխալմամբ կերայ մէկ քանի ծիրան,
Նա լաւ ծանուց ինձ ինչ գոլն իրան

3698

47

Երկու ամիս ես մնացի յանկողնի,
Շունչ կալ լիս միայն եմ իսկ մեռեալ դի,
Վանքը եղելէր ինձ համար իսկ բանտ,
Շատ թշուառ բան է գոլ վանքի հիւանդ,
Զի միշտ կարօտ է մնում այցելուաց,
Սիրտը նվազած և աչքերը թաց
Ոչ չլըուը կըտան ոչ թանէ սպաս,
Թէ և անդադար սպաս և ողբաս,
Հինգ օր է որ ես յանյուռութիւնից,
Հազիւ կանգնել եմ ի վերայ ոտից,
Կամումեմ գնալ յալս մերձակալ գիւղ,
Մուրալ անդ զհաց, հաւ բրինձ և իւղ,
Առեալ զամենալն բերել յանապատ,
Ուտել ստանալ զօրութիւն հաստատ,
Վանքն մեր ոչ հաւ ունի և ոչ կով,
Վանքին բան տւողն հիմա ովէ ով,
Նախնի Հայքը երբ հաց էին ուտում,
Մեծ մասն ի վանք էին առաքում,
Այժմեան Հայքը չի գիտեն ի՞նչ է վանք,
Կամ թէ ի նմա մեք կանք թէ չկանք,
Չեն գիտում զի մեք միշտ և անդադար,
Վասն իրանց եմք ազօթարար, ծառասաւ
Եթէ մեք չլինիմք նրանց օգնական,
Մարդկալին ազգը կանկանի կործան
Աշխարհ է յալտնի լայնատարած տուն,

Մեր ազօթքնէ սիւն ի նմա հաստատուն,
Ինչ օր վանաց մէջ չի մնաց վանական,
Այն օրը կլինի վերջին դատաստան:
Սէ Յ Ե Ա. Դ:
Ծառայ եմ աջիդ սրբազն սուրբ հայր,
Մեք ըստ ընութեան եմք միմեանց եղբար,
Ընչու էք կարծում ձեզ ի Տեառնէ մօտ,
Եւ մեզ գլխովին հեռի, անծանօթ,
Գուք ըստ ծուլութեան փախեալ մտիք վանք,
Մեք մեր կեցութեան համար արինք ջանք,
Գուք ձեր կեանքը միշտ անցուցիք առանձին,
Մնալով անպսակ անկին և անծին.
Գուք թագուցիք ձեզ յանձնած քանքարն,
Մեք գտաք քանքար ճեղքելով սարն,
Միշտ տալիս եմք հարկ Տեառն և մարդկան,
Չենք մնում նրանց մօտին պարտական,
Վասն ընտանեաց աշխատումենք հաց,
Նոցա ազօթքն է սատար մեր կենաց,
Ալս չափ տանջանքը չէր մեզ բաւական,
Գուք էլէք եղել մեզ համար իշխան,
Գիտեմ չի գիտէք թէ ով էր ձեր հայր,
Ոչ հարազատ քոյր ունիք ոչ եղբայր,
Կամենումէք կեալ մեր աշխատանօք,
Ուտել և ըմպել, ննջել յարգանօք,

Որ օրից սոր ձեր կոչումը ծնվեց,
Վասն մեր կենաց եղել էք իսկ ցեց,
Զոր ինչ մեր կենաց միջին ստանանք,
Պիտումէ նորա մեծ մասն ձեզ տանք,
Ի՞նչ է ձեր շահը ոչ ոք չէ դիտում,
Իսկ Դուք միմիայն ձեր շահն էք դիտում,
Կոչիք հոգևոր հայր կամ վարդապետ,
Միմիայն ունիք կոչումն և եթ,
Աւետարանի որ գլխումը կալ,
Գրած որ ազգը պիտի ձեզ բան տա,
Եթէ Դուք աշակերտ էք Յիսուսի,
Պիտումէ վարդիք իսկ նրան պիսի:
Վ. Ա. Ր. Դ. Ա. Պ. Ե. Տ.:

Սէլեադ ի՞նչու ես խօսում հակառակ,
Մէք ընտրել ենք մէկ այնպիսի վիճակ,
Որ պիտումէ միշտ դուք տաք մեք ուտենք,
Վասն ձեր կենաց առ Տէր աղօթենք,
Քրիստոս Տէրն մեր մեզ այսպէս ուսուց,
Թէ լաւ մշակը արժան է վարձուց,
Ով որ ալս մասին լինի հակաճառ,
Նա իսկ լութեր է ոչ թէ ուղղափառ.
Դու հպատակ լեր նախնական ծեսից,
Հայկական փառաց կիսատ չափը լից.
Զի հայք երբ կերել են մէկ պատառ հաց,

Կէսը տուելեն հոգեորականաց.
Դու էլ քոյ նախնեաց եղիք նմանող,
Մեր թեթև բեռն քաղցրութեամբ տանող,
Որ աստ արժանի լիցիս աղօթից,
Եւ անդ ընդ սրբոց լիցիս փառակից:
* * *

ԲԱՐԵՊԱՇՏԻԿԻՆ ԱՆԱՑ (*) ՍՊԱՀԱԿԵԱՆ.

Համբաւ ձեր լսել էի ձեզ չէի տեսել,
Այսօր տեսեալ ակնյանդիման հասկացայ ես էլ՝
Որ դուք էք բարուք վարուք Աննային պատկեր,
Դուստր նորա սուրբ Մարիամ մեզ Փրկիչ երեր,
Դէնչ ծնանին ի շահ մարդկան զանազան գործեր,
Որք են—գութ, սուրբ խղճմտանք և ազգային սէր:

Տեսակ ձեր է ամենընտիր նօնափառ ծաղիկ,
Ալլոց ծաղկանց պէս ձեզանում սնափառութիւն չիք,
Եթէ լինէր մէջ ձեր լիշեալ ախտից մէկ նշուլ,
Չէր մնալ անլայտ, զի աչք մարդկային չէ ծոյլ.
Պապ ձեր էր քարոզ բանին իբրւ Առաքեալ,
Հայր ձեր էր երկրորդ Սահակ Հայոց ձեռնկալ,
Ալլը ձեր է ըստ կոչման իսկ Աւետիք շնորհաց,
Գիտառատ, ուղղափառ Հայ, նպաստ աղքատաց:

(*) Ա. Մատովն համազապետին Շամախու Հայկազն-Կոլեմսկի Ասեսօր Աւասայ Մամիկոնեան Մամիկոնեանց:

Չեղ պէս ծառոյ պտուղն ընչու կըլինի դառն,
 Դառն պտուղ բերող ծառոյ նիւթն է խառն,
Զեմ կամում գովել զգեղ հողեղէն մարմնոյդ,
Այլ կամիմ պատմել զգեղ լուսեղէն հոգւոյդ,
 Հասակ ձեր չի ներիլ ինձ իմ սիսալանքն՝
 Թէ միայն անցաւորին տամ գրչիս ջանքն.
Անցողական կեանք ունի գեղ ամեն կանանց,
 Գովութեան արժանի է նա որ է անանց,
Պատմաբանք Հայոց գովեն զԱրան, Փառանձեմ,
Որք եղեն գեղեցկութեամբ լիճ արեան, ասեմ,
Մէկի գեղը հիմնայատակ արար զՀայաստան,
Միւսը պատճառ փլման եղեւ մեր Արքայից տան:
Չըկամիմ ճառել ես աստ զվէպ օտար ազգաց,
 Կղեոպատրայ միայն եղեւ կործան յոյժ բազմաց.
 Տացէ Տէր ձեզ միշտ լինիլ յաջող վիճակի,
 Տարածել 'ի վերայ Հայոց լոյս լուսնեակի,
 Քանզի եթէ ձեզ պէս լուսինք ունենայ Հայաստան՝
 Նմա երբէք չէ հարկաւոր լոյս Արեգական,
 Զի ճաճանչք Արեգական զնա կոյր արին,
 Որ մինչ ցարդ Հայք գերի են մնացել օտարին.
 Ընկալեալ գուք զայս ներբող հայկական յարգիւ,
Սէլեադին երախտալարտ կառնէք ձեզ սրտիւ:

18²62 'ի Շամախի:

ԲԱՆ ԸՍՏ ՊԱՏՇԱԽԻՆ.

Ով չունի կին ժրագլուխ՝ նորա տանից չի դուրս զալ ծուխ՝
 Նա տան տիկին չէ որ ունի սիպտակ երես, աչք և յօնք թուխ:
 „Սէ ՅԵ Ա. Գ.՝“

Խ Ա Ր Հ Ո Ւ Բ Գ.

Այն գաղանը, որ ես Առիւծ կարծէի՝
 Նա հակառակ կարծեաց իմոց դարձաւ լու,
Այն թուչունը, որ Արծիւ կարծէի՝
 Նա հակառակ կարծեաց իմոց դարձաւ բու,

Ես ընդ միմեանց խառնեցի մեղը ու շաքար,
 Եւ զաննման թանգաղին ազնիւ նեկտար,
 Նրանցից իմ ձեռօք կազմեցի նշխար,
 Երբ կամեցալ ուտել դարձաւ թոյն մահու:

Երկբայութիւն չի թողել հնութիւնը,
 Որ անշահ է խրատուց խրժնութիւնը,
Արարածոց մայր գոլով բնութիւնը՝
 Պտուղ կըտայ քաղցը, դառն և թըթու:

Բնական օրէնք երբէք իրանց չեն ստում,
 Սեխենին սեխ կտայ դգմենին դդում,
 Հաւը ծրտումէ ոչխարը կըդլտում,
 Զորքոտանիք ձագ են ծնում թուչունք ձու:

Զի փոփոխվիլ հազար մաքրես արծիճն,
Մարդ չի դառնալ երբէք վատարմատ բիճն,
 Ո՞նց պտղաբեր կարէ լինիլ ճահիճն,
Ազնիւ հողը կոչի միայն պտղատու:

Սոխը եթէ դրախտումը սերմանես՝
 Նորա վերայ անմահական ջուր ցանես՝
 Տիւ և գիշեր չարչարանօք ջանք անես՝
 Նա երբէք չի քաղցրանալ կմնայ կծու:

Կեղծեալ գոյնը սիրեցի զարդ կարծելով,

Փշու ծառը ջրեցի վարդ կարծելով,

Ներբողեցի մէկին ես մարդ կարծելով,

Վերջը տմարդ եղե չգիտեմ ընչու:

Ինչ մարդոյ որ նախնիք եղել էն ստոր՝

Արքայական փառաց հաստնի թէ որ՝

Չնչին գործոց ետքից գնալն է սովոր,

Չի լինիլ նա վեհանձն և ահարկու:

Բազում անձինք ծառայեն մեծամեծաց՝

Ծառայութեան առիթն է միմիայն հաց՝

Երբ մեծամեծք զբկեցան իրանց փառաց՝

Ծառայք շուտ խոյս կտան նման Աղուիսու:

Շատ եմ տեսել ես այնպիսի աղուեսներ,

Որք ըստ տեղւոյն կառնուն զանազան պատկեր,

Նոքա ոչ պարզ խիղճ ունին ոչ անկեղծ սէր,

Այլ ըստ մեծի մասին են չարալեզու:

Այս խօսքերը խրատ չեն այլ լոկ խորհուրդ,

Ով կատարէ նորա բանը չի լինիլ բուրդ,

Սէլեադ ժուժեա կանցանէ ձմեռն ցուրտ,

Համբերութեան շահը միթէ չգիտես դու:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Մէկատիւն ընտ միաւ հոգեւորականի լուսն ներարար:

Սէլեադ:

Հայր Տէր շրջել էք շատ երկիր,
Ունիմ առ ձեզ ես մէկ խնդիր,
Մէկ խօսքերիս լաւ ականջ դիր,
Այս կերակրոց ո՞րն է ընտիր:

Հոգեորական:

Ասմ որդի մի երկնչիր:

Սէլեադ:

Բօղբաշն է լաւ խաշած հաւն, Յ մայր Յ
Զըլըուրը թէ շիլա փլաւն,
Ֆասիանն թէ կաքաւն,
Քաշովին թէ քամած փլաւն:

Հոգեորական:

Ոռքա են կերակրոց լաւն:

Սէլեադ:

Բիրեանն է լաւ քալլափաշան:
Խորովածը թէ խաշլաման,
Շեշտուանին թէ զովուրման,
Քալածօշը թէ հարիսան:

Հոգեռական:

Ալդոքիկ են երկրորդական:

Սէլեադ:

Խաշիլն է լաւ թէ շփոթն,
Զուածեղն թէ կորկոդն,
Տօլմի չորն թէ մածնօտն,
Կամ թէ խոզի գլուխն ու ոտն:

Հոգեռական:

Լաւ են թէ տաք չի լինի օդն:

Սէլեադ:

Աղեքն է լաւ թէ թափանն,
Շորն, պանիրն թէ թանն,
Կարաք եղն թէ չորթանն,
Արաժան թէ բզկաթանն:

Հոգեռական:

Մըանց սիրէր Հայաստանն:

Սէլեադ:

Կարմրախայտն է լաւ Շահմահին,
Կապոյտը թէ չոր ֆաթմահին,
Նոր խաւեարն է համով թէ հին,
Աղարածը թէ անալին:

Հոգեռական:

Սոքա սիրեն զօղին, ցքին:

Սէլեադ:

Մեռելոյ հացն է լաւ կնունքի,
Նշանի թէ հարսանիքի,
Զատկական թէ Զրօրհնենքի,
Հրաւիրանաց թէ օրէնքի:

Հոգեռական:

Լաւը էնէ, որ է ձրի:

Եզրակացութիւն հոգեռորի:

Ոյս կերակուրքն են թանգազին,
Սէլեադ ոմաց զարդն է գինին,
Եթէ սոքա միատեղ լինին,
Արժանի են հոգեռին:

Սէլեադ:

Զեն արժանի մարմնաւորին,
Ով կտայ հանգիստ բանւորին:

* *

ՅՈՒՄԸՆՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՅՈՅՍ.

Երկար մնացի՝ ես այս սնուտի՝ Պանդոկի միջին,
Որ միշտ կրակ է՝ վառում իմաստնոց թռքի միջին.
Ով որ նրան՝ թշնամի էր՝ մինչի իւր մահն,-
Երջանկացաւ՝ նստեալ նախահարց գոգի միջին,
Իսկ ով նորա՝ սիրելին էր՝ զկնի մահուան,-
Սգաց, ողբաց, Դժոխալին՝ բորբռքի միջին.
Այս պանդոկին՝ գոնապանք են՝ անխիղճ հարուստքը,
Որք մէկ մարմին են, որ չունի՝ սուրբ հոգի միջին.
Սէլեան գրաւ է՝ տնւր դու աւարտ՝ ողբերգութեանդ,
Զի չես կարող՝ ապրիլ այսքան՝ մորմօքի միջին:

* *

Ե Ր Փ.

Լուս է պահանձի Տէ՛ր ողբեան՝ երգոյն չայտուածուն՝ սուրբ էնդուոյն:
Դմու ընտիր հարսնակ Աստուածազան,
Ծառ փրկութեան ազգի մարդկան,
Փոխան պտղոյն Եգեմական—
Ետուր զմեզ պառուղ փրկական:

Պաշտեն զքեզ դասք հրեշտակաց,
Սէրովեէք միշտ քեզ երգասաց,
Հայեան անշուշտ որդիդ գլժած—
Ունի ջնջել, գիր մեզ մեղաց:

Դմու մեծ թագուհի անմահից, պայս զար սկզբ
Մեք ըստ մարմնոյ քեզ ազգակից, ամենուար հմայ ով
Թուլ տուր համբոյը տալ քոյ սոտից, ու մուր սկզ ամ
Կալ ՚ի կարգի քոյդ ծառալից:

Մեք անարժան մշակ վարձուց՝
Ունամք, կոչեմք, ըստ ազուխուց,
Յուսուլով քոյդ ձրի գանձուց,
Եւ լուսեղէն սուրբ զգեստուց:

Սէլեան եմ գանձարան չարեաց,
Ողբամ սգամ ըստ իմ կարեաց,
Ո՞վ դու աղբիւր ամեն բարեաց,
Որդին քոյ զիս արեամբ փրկեաց:

*

*

ԱԹ ՄԱՐԴՆ ԱԹԸՆԴԻՆ.

Աստուած զքեզ ալար ըստ իւր պատկերին,
Ո՞ր քեւ լցուցանէ հրեշտակաց թերին.
Մեծ յուսով ընտրեց քեզ գատողն վերին,
Ընչու ընդիմայար նորա պատուէրին.
Ականջ դիր խօսքերիս դու սնափառ մարդ՝
Հարցմանս պատասխան տնւր մեղմ և հանդարդ:

Զեդ արե փալէիր անազօտ լուսով.
Ո՞չ հանդերձ գիտէիր, ո՞չ ծարաւ, ո՞չ սով,
Քեզ յանձնած սահմանը քակար մէկ պտղով,
Ընչու մահ ընկալար օծի խորհրդով.
Ականջ դիր և այլն:

Տէրն զքեզ այր արար՝ իսկ Եւալին կին,
Որ լինի պաշտօնեալ միշտ քո առաջին,
Դու քեզ գերի ետուր էնպէս անխելքին,
Ընչո՞ւ հաւատացեր նորա սուտ խօսքին.
Ականջ դի՞ր և այլն:

Երբ կերեալ պտուղը աչքերդ բացեր՝
Փոխան Աստուածութեան լուսից մերկացեր,
Յորժամ քոյ ստեղծողի ձայնը հասկացեր,
Ընչո՞ւ հառաջանօք մեղայ չասացեր.
Ականջ դի՞ր և այլն:

Հպարտութեամբ ձգար դու խոր անգունդն—
Տանջանաց մէջ, մնաց քոյ խեղճ սերունդն,
Դաստիարակ եղեւ մեզ դիւաց գունդն,
Ընչո՞ւ հայր ետուր մեզ այս վատ սնունդն.
Ականջ դի՞ր և այլն,

Եոր Եւան ծնաւ մեզ միածին փրկիչ.
Յովհաննէսը եղեւ նմա մկրտիչ,
Թէւ մարմնացեալ էր բայց էր Արարիչ,
Ընչո՞ւ կարճ պատմեցեր Սէյեադդ երգիչ.
Ականջ դի՞ր և այլն:

* *

ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ունաց մէժանուն բանապարհով Պարուից Փերդուլից մաշանուանելոց
առ Աօլեան Մահմատ Շահն իւրեանց այն աղաժառ, զի Շահն
այս խոսպացաւ պալ նմա զշարուստ վարչ վասն յօրինելոց զժերտն Շահ-
նամէ չափաբերական ոժիւ, բայց յետ աւարդաման գրչոյն անհապար էլուղ
խոսքունակ իւր:

»Ո՞Վ Արքայ Մահմուդ տիրող աշխարահաց՝
Թէ չունիս զերկիւղ իմա գոյ Աստուած.
Քեզանից առաջ էլ շատ արքայք կալին,
Բարեգործք և սատարք ազգի մարդկալին.
Քան զքեզ յոյժ մեծ և զերակատար,
Գործք նոցա ստրկաց հանգիստ էր դադար.
Լաւ անունն էր նրանց փառք և պարծանքը,
Ուղղութիւնն էր նոցա վայելուչ կեանքը.
Միշտ ձեռնընկալ էին խեղճ հպատակաց,
Ուղղութեամբ պաշտէին զԱրարիչն-Աստուած
Տքնելով յաշխարհի գտին լաւ անուն,
Զի նա էր Տէրութեանց մեծ սիւն հաստատուն:
Ինչ Արքայ ցանկացաւ հաւաքել դրամ,
Իմաստնոց աչքին երեաց անհամ.

Տիեզերք համայն են քեզ ասպարեզ,
Հասկացի՞ր տես թէ ի՞նչ եմ ասում քեզ.
Մոռացար իմ մտաց մարդակէզ հուրն,
Չերկնչի՞ս տեսեալ իմ երկճղնեալ(*) սուրն,

(*) Պարսկական եղեգնեայ զըքի աճական անունն է:

Որ ժպիրհ, Հերծուածող անուանես դու զիս.

Որձ առիւծ եմ, մկան յարմարես դու զիս,

Ինձ փառք և պատիւ են այս վատ բառերը.

Զի ունիմ Մահմէդի և Ալու սէրը.

Ինչ մարդոյ միջին գոյ նախանձ առ Ալին՝

Նա անբաղդներից անբաղդ է ուժգին.

Ես սրանց երկուսին ծառալ եմ ստոր,

Թէև զիս առնել տաս կտոր, կտոր.

Զարժանիս երբէք չունիմ մոռանալ,

Թէև դու կամենաս իմ գլուխս տալ.

Ինչ որդի որ եղե իւր հօր թշնամին,

Դժոխոց հուրն զնա կալրէ գլխովին.

Ես ծառալ եմ Մահմէդ նախագուշակին,

Եւ պաշտող հող ոտից նորա ժառանգին.

Ահ ետուր ասելով „թէ ընդ ոտիւք փղաց՝

Ունիս աղալ իմ մարմին, զեդ ջլաղաց.”

Չունիմ ահ զի ունիմ անկորուստ հոգի.

Իմ տէրըս Մահմէդ է և ծառանզն Ալին,

Տես թէ ինչ ասաց այն թագն արժանեաց՝

Հեղինակն առնելեաց և հրաժարելեաց՝

Ես քաղաքն գիտութեանց իմ դուռն է Ալին,

Սա անկեղծ բարբառ է մարդարէին,

Հառատամ զի սա էր կամք մտաց նորա,

Ամեն ձալն Մահմէդի ձալնից ստոր ա.

„Եթէ դու էլ ունիս գիտութեան հանճար,
Մահմէդին և Ալուն արա քեզ սատար.

Թէ վնաս ստանաս ես եմ մեղաւոր,

Զի սա է նպատակ լոլժ խորհրդաւոր.

Ի սմա ծնեալ եմ ’ի սմա կմեռանիմ,

Ես փոշի ոտից եմ մարդարէին իմ,

Ընդ այլոց չունիմ ես ամենեկին գործ,

Վասն անսարդ գործոց եմ ես անկիրթ, անփոք.

Թէ Արքայն Մահմէդոց սրանից տալ խոյս՝

Նրանից ո՞նց կարեմ ունենալ ես լոյս.

Աստուած որ մարդոյ որ տալիս է գահ՝

Նա պարտ է Մահմէդին, Ալուն լինի շահ.

Թէ նրանց փառքը ես սկսեմ պատմել՝

Մահմուդի պէս հարիւր մարդին չեմ պատուել.

Տիեզերք համայն են զահք արքալից,

Այն գահը արժան է միայն հսկալից.

Ֆիրդովսին թուսի(*) գոլով սրբակաց՝

Զայս վէպը Մահմուդի համար չի ասաց,

Այլ յանուն Մահմէդի, Ալուն եմ ասել,

Թանգագին ակունք ընդ միմեանց գասել.

Այս իմ պատմութեան(**) դու չի նայեցեր,

Բանիւք թշնամեաց ինձ չի խնայեցեր,

Ով իմ քրտինքս անպատիւ արար,

Անսատար թող զնա ով Աստուած արդար.

(*) Թուս է քաղաք տեղի ծննդեան Ֆիրդովսուն.

(**) Այս պատմութիւն Շահնամէ գիրքն է, որէն վէպ Թագաւորացւ“

Գրեցի զայս վէպ անցեալ արքալից,
Հնութիւնն արի ես նորութեան հետ կից,
Հասակ իմ մերձեցաւ իննուսուն ամաց,
Յոլսս գլխովին անկատար մնաց.
Երեսուն ամ ես միամիտ սրտիւ՝
Զարչարանք գրեցի թէ գիշեր, թէ տիւ,
Գրեցի գերեսուն հազար բան երկտող,
Շողողուն, քաղցրահամ, 'ի սիրտ թափանցող,
Խօսեցի թրից, գեղարդից, նետից,
Անեղից, ճոպանից, ծովից և գետից,
Առիւծից, ընծից, գալից կամ փղից,
Իժից, վիշապից, ահագին-ձկնից,
Դեկից, բորենից, ահարկու արջից,
Չայնք որոց ելանեն ցըրահ երկնից,
Գերազահ մարդից գոռ պատերազմից,
Բացարձակ դաշտից՝ անառիկ բերդից,
Մեծափառ անձանց արարեալ ջանքից,
Սուր, Սալմ, Աֆրասիաբի գործերից,
Աֆրիդուն Շահից և Քէլղուբադից,
Ճօհաքի նման անանուն վատից,
Գեարշասիբ, Սամ և արին նարիման,
Քաջամարդ արանց գործքն զանազան:
Հուշտնկից և Թէյմուրաս-Դեկը կապողից,
Մանուչար և Ջիմշիդ արդար դատողից,

Քալուս, Քէլղուբադ թաղադիրներից,
Ռուստամ, Ռուբինթան զինակիրներից,
Գուդարզ և Հուշտադ կամ Փուր ընտիրը,
Ընդ ոտիւք որոնց թնդայլ երկիրը,
Զայն լոլժ անուանի արքայն Լօհրասիբ,
Որոյ ախոլեան էր միշտ Դեաշտասիբ,
Զամասիբն որ անհաշիւ նետիւ,
Յալգ արար բազմիցս զպայծառն տիւ,
Դարեհն աննման, Բեհմանն հսկայ,
Աղեքսանդր որ էր արքայից արքայ,
Արդաշիրն կամ Շափուռն անաչառ,
Բահրամն կամ Նուշլովանն արդար,
Փարվիզ և Հորմեզ, Ֆուրէշ և Ղուբադ,
Խոսրով որ Փարվիզ էր կոչվում հաստատ.
Սրանց պէս վեհափառ անձանց լիշտակ,
Մէկ մէկ պատմելով թողի մեծ կտակ,
Նոքա մեռեալեն վաղ ժամանակաւ,
Իմ բանիւ փառք նոցա նոր կեանք ստացաւ,
Ես նման Ցիսուսի ալս մեռելներին,
Կրկին լարութիւն ետու լիովին,
Ես ցուցի քեզ մէկ ալնպիսի վաստակ,
Որ 'ի քէն մնայ անշարժ լիշտակ,
Ամենայն շինուածք կլինին ցիրուցան,
Անձրեից կամ տապից ջերմ արեգական,

Մէկ հիմն եղի ես յոտանաւորաց՝
Որ լինի քեզ համար արձան մշտակաց,
Զայս բան զկնի անհաշիւ դարուց՝
Իմաստունք կանուանեն պահարան գանձուց.
Բայց դու ինձ այսպէս չէիր տուել յուս,
Ինձ քոյ պէս արքայից եհաս սուտ խրախուս,
Վատ անձինք երբէք լաւ օր չի տեսնան՝
Որ իմ թանգ գըռուածոց ընդէմ ընթացան,
Լաւ գործս արքայի աչքին ցուցին վատ՝
Սրտիս սուրբ խորհուրդը թողեցին կիսատ,
Թէ մին դատաւոր լինէր անաչառ՝
Որ կարէր տալ վճիռ ուզիղ և արդար՝
Կը տեսնէր որ ես ըստ իմ դրութեան՝
Ցուցեալ եմ հրաշք մարդկային բնութեան.
Զաշխարհ արարի ես բանից դրախտ,
Իմ խօսքս է սերմն բարութեանց և բաղդ,
Այսպիսի խօսքեր շատունք խօսեցին,
Աշխարհին իրանց իմաստը ցուցին,
Թէ և յոյժ բազմաթիւ եղեն այնպիսիք,
Բայց միայն նրանց մէջ ինձ նմանը չիք,
Շատ տանջանք կըեցի ես երեսուն ամ,
Բուն ֆարսի բառերով յարուցի զԱջամ: (*)
Արքայն եթէ չէր անչափ նեղաձեռն՝
Բաղդաւոր կառնէր յաւիտեան զիմ սեռն,

Աղքատի տէրը թէ Աստուած չի լինէր՝
Նա անշուշտ կմնայր քաղցած և անտէր,
Եթէ դու Արքայ լինէիր գիտուն,
Իմ վարձուց քանակը կլինէր անհուն.
Ով ոք որ չունի գիտութիւն, իմաստ՝
Նա իսկ անձունի անկոփ կոճղ է հաստ.
Թէ հայրը Արքայի թագաւոր լինէր,
Իմ գլխոյս նա պիտի ոսկեայ թագ դնէր,
Թէ մայրը Արքայի լեալ էր գշխոյ՝
Նա զիս կըթաղէր ՚ի մէջ ոսկւոյ.
Որովհետեւ նա լշխանազն չէր՝
Զկամեց լինիլ պայծառ անուան տէր,
Մահմուդ քոյ ձեռն դու ծնեալ օրից՝
Ինն է իննուց մէջ, երեք ՚ի մէջ չորից,
Երեսուն ամ ետու շահնամին ես ջանք,
Յուսալով թէ կտաս դու ինձ աշխատանք.
Կրտաս հողեղէն սրտիս ուզածն,
՚ի մտի ունելով դու քոյ Աստուածն.
Դու բացեալ զբերան քոյ անհուն գանձուց,
Անարգանք տվիր ինձ փոխանակ վարձուց,
Ծառայի որդուց չի լինիլ մեծ ալը՝
Թէ և շատ արքայք իցեն նմա հայր,
Անարգներին ով որ մարդկանց դասէ՝
Կամ թէ նրանցմէն մէկ շահ սպասէ,

(*) Աջամ՝ Պարսկաստան ասել է:

„Այնպիսին իրան խաբելոյ պէս է,
Ծոցումը իժ օձ պահելոյ պէս է.
Այն ծառը որ ունի բնութիւն ստոր,
Եղեմայ դրախտի մէջ տնկես թէ որ,
Կամ անմահական առուից նրան՝
Զրես շաքարով, մեղմով աննման,
Կրկին այնպիսի վատարմատ ծառն,
Կտայ քեզ պտուղ լեզոյ պէս դառն,
Հոտով իւղ ծախողից թէ մօտ անց կենաս՝
Հանդերձդ դու անուշ հոտով կունենաս,
Թէ ածուխ վաճառի մօտեն անցանես՝
Անպատճառ ինքդ քեզ սև երես կանես,
Վատերի համար վատ երբէք բան չկայ,
Սև գոյնը գիշերին յոյժ յարմար կըգայ,
Ստոր անձանց ոնց կուլի յոյս կապէլ՝
Արաբը լուացմամբ չի սպիտակիլ,
Վատատոհմ մարդկանց յոյս կապող աչքից,
Զեռք քաշիր և նրանց մէջը մոխրով լից,
Նրանց Աստուած է այնպէս ստեղծել,
Նրանց ուղղելոյ հնարք չեն դաել,
Ազնութիւնը չէ լոկ խօսքից կախված,
Երկու հարիւր խօսք են մէկ փողից ցած.
Արքայն թէ ժառանգ Արքայի լիներ՝
Նորա մօտ իմաստը յոյժ թանգագին էր,

Իմա զի սոյնպիսի գոյն զգոյն զըոյցք,
Են Շահի վարուց արդար ապացոյցք.
Դու իմ երեսիս կեղծիւ նայեցեր,
Դառն աշխատանքիս չի խնայեցեր,
Վասն այն արարի զայս ի քէն գանգատ,
Որ մնայ քեզ համար մշտական խրատ,
Զի գուցէ հասկանաս գոլութիւն բանից,
Պատուես նրանց որ գետեն քեղանից,
Բանաւոր անձանց նեղութիւն չիտաս,
Նոցա խոցերի խստութիւնն զգաս,
Զի մի բանաստեղծք եղեալ քե անգոհ,
Արացեն զքեզ բամբասանաց զոհ,
Լամ ես առ դրան մեծի Արարչին,
Տարածեմ մարմինս յերեսս գետնին,
Աղաչեմ զի նա քեզ այրեացէ հրով,
Զթողէ զայրացման մէջ սիրտ իմ վրդով:”
,,Թարգմանութիւն Սէլեադի:”

* *

ՅԱՆԿԱՐՆԱԾԻՆ ԲԱՆ.

Դուք որ յանկեան խաղաղութեան նստեցիք,
Զատամս շանց, բերան մարդկան կապեցիք,
Թուղթը պատոեցիք գրիչը ճարթեցիք,
Զեզ ոսոխի լեզուի ձեռից փրկեցիք:

”Ս է Յ Ե Ա Դ:”

Գրուշակութիւնն է վեհապայտութեան:

18³₃62

Ինչպէս որ մարդկալին գործն է ցոյց աալիս,
Վերջը մեր դռնից մեզ ողջոյն է տալիս.
Մարդկանց միջին սիրու մէկ նշան չկալ,
Շարժ, սով, սրածութիւն ամեն ուրեք կալ.
Խեղճ հոգին ձգել ենք մոռացութեան տակ,
Մեզ արել ենք մարմնոյ ծառայ հոլատակ.
Եղելենք հետեղ երդմնազանցութեան,
Ամենայն գործք մեր են ընդ դէմ բնութեան.
Ճշմարտութեան նշոյլ չկայ ոչ ովում,
Ոչ չորում, ոչ ծովում, բոցում կամ օդում.
Կերպ ամեն դարերաց յուժ փոխարկված են,
Կան մարդիք որք կարծեն թէ իսկ Աստուած են.
Հոգեորք մարմնաւորք աղքիւր են մեղաց,
Դժոխոց գրունքը է նրանց միշտ բաց.
Անառակ տեսնալիս երեսն ենք պաշում,
Առաքինեաց վերայ շան պէս եմք հաչում.
Որքան մեղք գոյ մարդը այժմ գործում է,
Երեկ Արարչի ոյժը փորձում է.
Մէկ պատիժ տեսնալիս տիփ մեռանում ենք,
Բայց յետ մէկ վայրկենի զայն մոռանումենք,
Լինումենք աներկիւղ գիշատող գազան,
Շարունակումենք չար գործք մեր զանազան.

Մարդ չկալ որ ասես չէ սա կեղծաւոր,

Թէ ազնիւ, թէ իշխան և այլ բանաւոր,

Կեղծութեան մէկ անունն է Պոլիտիկալ,

Իսկ երկրորդ կոչումն է Գիպլօմատիկալ.

Մարդ ո՞նց չի որոնէ զայս անուններն,

Որ կարէ նրանցով ծածկել ստերն.

Սուտ բառի սէ տառը է իսկ սատանալ,

Ատախօս մարդ կուզես ահա սա, դա, նա,

Գնումենք ժամ ՚ի տես իդական սեռի,

Երեկ չէ հեռու ծնունդն նեռի:

Տէր մինչի Երբ պիտես լոել համբերել,

Մարդու բազմատեսակ մեղքերը ներել,

Տեսնումես որ յալտնի չենք ապաշաւում,

Կրկին մեր յանցանքը ընչու ես քաւում,

Բիւր մարդկանց միջին թէ լինի մէկ լաւ մարդ,

Նա ևս կախարդ է կամ մեղաց թակարդ,

Հաւատա՛ Սէյեադիդ նա է փորձաքար,

Բարի մարդ գտնելոյ այժմ չիք՝ հնար:

* * *

ՊԱՅԾԱՌԱՓԱՅՅԼ ԻՇԽԱՆՈՒՀԻ

ՄԱՐԻԱՄ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ. (*)

Մարդ ո՞նց է կարող չտալ փառք և պատիւ բնութեան շնորհաց-
Գովելի բարուց վարուց, գիտութեան և գեղոյ գիմաց.

(*) Է Ամուսին քաղաքապետին Շամախւոյ հայկացն Մայեօր-Պօղոսի
Ֆարառաւանեան երկայնաբազուկ Արդութով եշխանի:

Այս ձիրքը քեզ լիովին բաշխել է քոյ Սըրարիչդ,
Լուսափառ իշխանուհի, սոքա են իսկ զարդ իշխանաց.

Բարուքհեզ, վարուքհամեստ, գիտութեան գանձ, սիրոյ տաճար,
Դու ես դու Մարիամ խանում դու ես շողջողուն թագ փառաց.

Դիմօք Լուսնեակ, զարդիւք թութակ, մարմնով քան զձիւն
սպիտակ,

Դու լոյս ես ի՞նչպէս կարես կոչիլ ծնունդ հողեղինաց.

Կերպիւ հրեշտակ, ձայնիւ Սոխակ, գարնանալին մեղմ եղանակ,
Եթերական մարմին ես ենթակալ չես աստիճանաց.

Չիք առարկալ յաշխարհի, որ իմ լեզուս գոված չիլինի,
Բայց մինչի ալսօր քոյ պէս արժան նիւթոյ չէր պատահած.

Չեմ կարող քեզ վարդ կոչել, զի է սպիտակ գոյնոյ կարօտ,
Եւ ոչ նօնափառ զի նա կարմրութեան նշոյլ չի տեսած.

Ոչ մանուշակ, ոչ Շուշան, ոչ համասփիւռ, ոչ բրաբիոն,
Եւ ոչ եղբօր արիւն որ անմեղ (^(*)) արեան նշան մնաց,

Քեզ չեմ կարող անուանել ադամանդ, զի նա չունի կար—
Քոյ փալլուն թշերիդ պէս գոյն ունենալ, միամիտ կաց.

Եազութը որ հոգին տալ քո բոցափալ շրթանց մօտին—
Սըրեամբ ներկած ու քար է, աւերակի տակին մնացած.

Մարգարիտն ընչու պիտի լինիլ ատամներիդ ոսոխ,
Որ նրան պէս մարգարիտ ոչինչ թագաւոր չի ունեցած.

Ով չի գիտէ որ երկնային կամարք լուսաւորք շատ ունին,
Միմիալն գու ըստ լուսնոյն իսկ թագուհին ես աստեղաց.

Դու հուրի ես պիտումէ Մահմեդի դրախտումը լինիս,
Եւ ոչ թէ ՚ի Շամախի, ՚ի շարս վայրի զազանաց.

Ամենընտիր կերպասը Եւրօպայու քեզ արժան չէ,
Քեզ զգեստ լինիլ կարեն գովեստք Հոմերոսին Յունաց.

Երևի այժմեան մուսալք քոյ համբաւը դեռ չեն լսել,
Կթէ ոչ շատ գոյնզգոյն զարդուք կուլէիր զարդարած.

Իւրաքանչիւր բանաստեղծ պարտէ տալ յարգ գեղեցկութեան,
Սյապէս է ասում Պուշկին յալտնի բանաստեծն Ուուսաց.

Խակ լեզուս, բութ գրիչս, պղտոր միտքս, ո՞նց են կարող,
Գովել քեզ ըստ արժանւոյն ո փառանձեմ Հայոց նախնեաց.

Այեազն եմ խոնարհ ծառայդ գիտեմ խօսքիս թերութիւնը՝
Ներեա լուսափալ Տիկին, զի շատն ապագային մնաց:

1862 թ. Ապրիլ 9-ին

՚ի Շամախի:

* * *

՚ի Շիմոց Ակադեմիկ առ մեռեալ հայոց գիշեն Շամախի սաղանի ՚ի
9 Ընտելէ 1862 ամի յունուն հանդիսոր օրհնենախ:

Ողջոյն ձեզ ՚ի գըի նստած մեռելներ,
Երիտասարդք և ալեզարդ ծերեր,
Կալ արզեօք ձեր մէջ քրիստոնէի սէր,
Թէ ընդ միմեանց էք մեզ պէս ոսոխներ:

Դուք ոչ կայք ունիք ոչ կալուած, ոչ գանձ
Եւ ոչ հոգեղէն մարմին սնապանծ,
Որ կարենան ձեր մէջ ծագել նախանձ,
Երջանիկ էք գուք երանելիներ:

(*) Այսինքն Աբէլ աբէնն:

Դուք չունիք մեզ պէս անհաշտ թշնամիք, ու պար առ
Զեզ ատելութեան չեն կպնում քամիք,
Ոխերիմ կեանքը է սնոտի, և չիք—
Նորա վիճակին, լաւութեան վաւեր:

Մարմին ձեր հիմայ եղել է սե հող,
Ոչ հաց է պիտոյ ձեզ ոչ ջուր ոչ փող,
Դուք չեք տէրութեան գանձին հարկ տվող,
Զեր հարկապահանջն է միայն Տէր Տէր:

Դուք ձեռք քաշելով յունայն աշխարհէս,
Մտիք ձեր նախնի հայրենեաց հանդէս,
Մեզ համար թողիք ցաւ և վէրք պէս պէս.
Եւ անտանելի գառնութեան բեռներ:

Մէկ բոպէ խնդալ բիւր օր սպալ, լալ,
Արուագէտ արանց կեղծ գովասանք տալ,
Մինչի մահ անթիւ չարութիւնք զգալ,
Մեզ համար մնացին ալս սե սե օրեր:

Երանեալ գուք մեռած հայկազինք,
Զի ձեզ ընակարան ընտրեցիք զերկինք,
Նոյն վատ գրութեան մէջ են մերայինք,
Չոր ունէիք գուք մինչ ցմահն ձեր:

Ես Սէլեադն եմ կեանքից անգոհ,
Զարեաց առաջին իսկ անմռունչ զոհ,
Աշխարհը գիւաց տուն է եղել ոհ,
Փութա զիս փրկել Քրիստոս մարդասէր:

* *

ՅԱՆԿԱՐԾԱԾԻՆ ԲԱՆՔ.

Երբ որ տիրեց մարդկան արատ՝
Զի մնալ ոք արդարադատ,
Այժմ յայտնի արատն է շատ,
Որ անաչառ չկալ մէկ հատ:

„Ս է Յ Ե Ա. Դ.՝“

* *

Ով այժմեան ժամանակի ունենալ հարիւր վկայ՝
Իմացէք նրանց միջին մէկ ճշմարիտ վկայ չկայ,
Ինչ մարդոյ ձեռին դնես մին մանէթ Որուսաց գրամ՝
Նա առանց ամաչելոյ Աւետարանը կուլ կտայ:

„Ս է Յ Ե Ա. Դ.՝“

* *

Վ Ե Պ

Արքայի ժայռ Ա Ե Խ Ո Ն Ի առաջնոյ, և որդես նորու Ո Խ ու Ե Ե նի
և թագուհի, յօբինեալ չափաբան ոչի է Պ Ե Մ Յ Ո Ւ Շ Ո Ւ Ն Ե անց,
Ա Խ Ե Ա ռ տ մականուան է լոյ,

Գ Ո Ւ Շ Ա Կ Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն.

Ով կարէ զկարգ նախասահմանութեան—
Ենթաձգել եղծման կամ փոփոխութեան:
„Ս է Յ Ե Ա Դ“

Սիս մայրաքաղաք էր Հայոց ազգին,
Ուր նստէր Լ և ոն՝ արքայն առաջին,
Մէկ ծեր ճգնաւոր՝ Մըսըրէն(*) եկաւ,
Հրաշիւք սիրտ մարգանց ստացաւի գրաւ.
Բազումք մարգարէ կոչեցին նրան,
Զի բացադրէր ամեն անյալու բան:
Լ և ոն արքայն երբ այս լուրը լուաւ—
Ճգնաւորն իրան մօտ կոչել տուաւ,
Նախ եցոյց նմա հիւրասիրութիւն,
Յետոյ նրանից խնդրեց օրհնութիւն.
Ճգնաւորն ուզեց օրհնութիւնը տաւ,
Աչք նորա սկսան ինքն իրանց ողբաւ,
Ճգնաւորն ասաց՝ Բաղամու պէս—
Թէւ կամիմ ես արքայ օրհնել քեզ,
Միայն լեզուս չէ նայում հրամանիս,
Յայտնի արգելանք է ինձի տալիս:

(*) Եղիսպասի անունը ըստ արեւելեան ազգաց Մըսըր է:

Արքայն այս բանիւ անչափ զարհութեալ
Ս.սաց հայր սուրբ՝ գիտեմ չես լուեալ,
Ես շատ հնագանդ եմ Տէրի վճռոյն,
Ինչ որ տեսնում ես՝ պատմեա ինձ դու նոյն:
Պատասխան տուաւ ճգնաւորն ծեր,
Լուր բանից իմոց Հայոց ազգի Տէր,
„Աստուած բարկացաւ Հայոց աշխարհին,
Կամում է խլել նրանից իր բարին,
Զկնի սակաւ միջոցից, ափսոս—
Դու և որդիք քոյ Ո ու բէն և Թորոս—
Կոստանդնուպօլիս պիտի գնաք գերի,
Զայս պիտի լինի իմա անթերի.
Դու և Ո ու բէն չէք տեսանել դարձ,
Բայց Թորոս պիտի լետ դառնալ յանկարձ,
Նորոգէ կրկին անկեալ աթոս քոյ,
Ահա այսպէս է վճիռն Աստուծոյ:
Զայս լուեալ Լ և ոն շուտ ծունը եղեալ—
Ս.սաց կամք Տեառն եղիցին օրհնեալ:

Թ Ե Ր Ա Հ Ա Ւ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Ինչ մարդ եղև թերահաւատ՝
Նա չունի մէկ վիճակ հաստատ:
„Ս է Յ Ե Ա Դ“

Երանի թէ այս վիճակ նոցին չար՝
Մի և նոյն դըութեան մնայր ընդ երկար,

Կարծելով թէ բանք սուրբ ճգնաւորին—
 Խարեւայութեան ազդմունք են չնչին,
 Թորոսը կոչեաց յիշեալ ծերունին,
 Ասաց ում դուստրը կը լինի ինձ կին:

 Ճգնաւորը իւր բերանը եբաց,
 Թորոսին պատասխան տուաւ ասաց,
 'Ի ծալը քաղաքին կալ մարդ մի հատիկ,
 Ինքը ձկնորս է ունի մէկ աղջիկ—
 Եօթն տարեկան նա կուլի քոյ կին,
 Ականջ դիր ալժմ նորա վիճակին,
 „Աստեղք լուսափալք աստեղք շողողուն,
 Ի հիւղ մենաւոր ցայտեն լոյս փայլուն,
 Անդ չքնաղ դշխոյ ընդ խոշոր խորգով,
 Սքողէ զիսոց ոսկւով մարգարտով:“

 Թորոս ծիծաղեց՝ ասաց ծերունւոյն,
 Այս բան քոյ է իսկ նման առաջնոյն,
 Զոր գուշակեցեր՝ իմ հալը Լևոնին
 Յիմարաց մօտ քոյ խօսքդ գին ունին.
 Երբ Թորոս նրան այս բանը ասաց,
 ճգնաւորը նոյն ժամայն ել գնաց:

 Թորոսը յետոյ նստեալ նժոյգ ձին—
 Քաղաքի ծալը գնաց առանձին,
 Երբ որ մօտացաւ նա ձկնորսի տան,
 Ներս մտաւ տեսաւ նորա աղջկան՝

Որ փայլէր իբրև թանգագին գոհար,
 Բոնեց ձեռիցը քաշեց չարաչար—
 Առ ափն միոյ առուի, որով՝
 Զուրը մշտապէս գնալը դէպ 'ի ծով,
 Դաշնակով խփեց աղջկայ սրտին,
 Զգեց գնա 'ի ջուրն առուին.
 Դարձաւ անտի տուն նստեալ իրան ձին,
 Խօսելով այսպէս իւր սրտի միջին՝
 „Տեսցուք թէ որպէս բանք ճգնաւորին՝
 Հատ գուշակութեան կը պտղաւորին:“

ՏԱՐԱԾԱՂ ԴՈՒԻԹԻՒՆ.

Տարաբաղդութիւնն է պատիժ արդար,
 Նրանց որք անկիրթ են և անկատար:
 „Ս է Յ Ե Ա Դ“

Յունաց ընդարձակ իշխանութեան տէր—
 Կայսրն Յովհաննէս Պերփերութէն էր,
 Լուաւ թէ հայոց Լևոն մեծ Արքայն՝
 Եբաց քաջութեան ասպարէզ յոյժ լայն,
 Գիգեցաւ 'ի նմա նախանձ ահագին,
 Հրաման ետ Պեթեին զօրապետին,
 Որ մեծ կուսակալ էր Անտիոքայ,
 Զի նա Լևոնին նեղութիւններ տայ:
 Պեթեին կամաւ իւր կայսերութեան՝
 Շատ զօրօք գնաց Լևոնի վերան,

Լ Ա Ռ Ն թ է ւ շ ու տ ն մ ա ը ն դ դ է մ ե լ ա ւ,
 Բ ա լ ց ՚ ի ժ ա մ մ ա ր տ ի գ ե ր ի վ ա ր ե ց ա ւ,
 Վ ա ս ն ա զ ա տ ու թ ե ա ն ե ր կ ու ք ա ղ ա ք ե տ,
 Ա ր ձ ա կ վ ե ց դ ա ր ձ ա ւ ն ա ՚ ի տ ու ն ի ւ ր յ ե տ,
 Կ ր կ ի ն զ բ ա զ ու մ զ օ ր ս ժ ո ղ ո վ ե ա ց,
 Ե ւ Պ ե թ ե ե ն ի ն պ ա տ ժ ե լ գ ն ա ց,
 Խ լ ե ա ց ՚ ի ն մ ա ն է զ ա յ ն ե ր կ ու ք ա ղ ա ք,
 Յ ո ր ո ց զ ր կ վ ե լ է ր ն ա ս ր ա ն ի ց ա ղ ա ք,
 Բ ա ց ՚ ի ն ր ա ն ց ի ց է լ շ ա տ ք ա ղ ա ք ն ե ր,
 Ա ռ ա ւ ո ր ջ ո ւ ն ա ց ե ր կ ր ի ա չ ք ն է ր,
 Կ ա յ ս ր ը լ ո ւ ե ա լ զ ա յ ս բ ա ն ի ց հ ա ն գ ա մ ա ն ք,
 ՚ ի մ տ ի դ ր ա ւ յ ո ւ ց ա ն ե լ մ ե ծ ջ ա ն ք,
 Ո ր չ ի զ ր կ վ ի յ ե ր կ ր է ն կ ի լ ի կ ի ո լ,
 Շ ա տ զ օ ր ք ժ ո ղ ո վ ե ց զ օ ր ու թ ե ա մ ք դ ր ա մ ո յ,
 Ի ն ք ն ա ր ձ ա կ վ ե ց ա ւ Լ Ա Ռ Ն ի վ ր է ն,
 Ո ր ա ռ ն ո ւ զ ք է ն ի ւ ր Հ ա յ ո ց ա զ գ է ն,
 Ի ն չ ք ա ն ժ ա մ ա ն ա կ ո ր Հ ա յ ո ց ի շ ա ն ա ք,
 Հ ո գ ւ ո վ ՚ ի մ ա ր տ ի յ ո ւ ց ա ն է ի ն ջ ա ն ք,
 Ե ւ ը ն դ Ա ր ք ա յ ի ն է ի ն ա ն կ ե ղ ձ ս է ր,
 Լ Ա Ռ Ն զ օ յ ն ս ա մ ե ն տ ե ղ յ ա ղ թ է ր,
 Բ ա լ ց յ ե տ ո յ ե մ ո ւ տ ՚ ի բ ա ն ա կ Հ ա յ ո ց,
 Զ ե ռ օ ք ի շ ա ն ա ց ա տ ե լ ո ւ թ ե ա ն բ ո ց,
 ՚ ի մ ի ո ւ մ մ ա ր տ ի ե ղ է ն յ ի ր ու ց ա ն,
 Լ Ա Ռ Ն ը ն դ ո ր դ ւ ո վ ք գ ե ր ի վ ա ր ե ց ա ն,

Կ ա յ ս ր ը զ ն ո ս ա Ս տ ա մ բ օ լ տ ա ր ա ւ,
 Բ ա ն ճ գ ն ա ւ ո ր ի ն կ ա տ ա ր ս տ ա ց ա ւ,
 Յ օ ր է գ ու շ ա կ մ ա ն ծ ե ր ո ւ ն ւ ո յ ն բ ա ր ի՝
 Ա ն ց ե լ է ր յ ա յ ն ժ ա մ ա մ ա մ բ ո ղ ջ ո ւ թ տ ա ր ի ։
Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Ի Ի Ն Վ Կ Ի Ծ Ա Կ Ի Ւ Թ Ի ։
 Փ ս փ ո խ ո ւ թ ի ւ ն չ ա ր վ ի ճ ա կ ի ՝
 Ա ն շ ո ւ շ տ ա ռ բ ա ր ի ն կ ը հ ա կ ի ։
 „ Ս է Յ Ե Ս Ո Ւ Թ Ի ։
 Մ է կ տ ա ր ի գ ե ր ի ք բ ա ն դ ը մ ն ա ց ի ն ,
 Բ ա զ ո ւ մ չ ա ր չ ա ր ա ն ք յ ա ն ձ ի ն ս զ գ ա ց ի ն ,
 Կ ա յ ս ր ը խ ն ա յ ե ա լ խ ե ղ ձ գ ե ր ի ն ե ր ի ն՝
 Հ ր ա մ ա լ ե ց ն ր ա ն ց բ ա ն տ ի ց գ ու ր ս բ ե ր ի ն ,
 Ո ո ւ բ ե ն և Թ ո ր ո ս ո ր դ ի ք Լ Ա Ռ Ն ի ն ,
 Ծ ա ռ ա յ է ի ն մ ի շ տ Պ ե ր փ ե ր ո ւ ժ ե ն ի ն .
 Մ է կ օ ր կ ա յ ս ր ը զ ն ա ց բ ա ղ ա ն ի ս ,
 Ա ս ա ց Ո ո ւ բ ե ն ի ն գ ու է լ է կ ը ն դ ի ս .
 Ե ր բ ջ ո ւ ր հ ա ր կ ա ւ ո ր ե ղ և լ ո ւ ա ց մ ա ն ,
 Ա ն դ կ ա յ ր մ ա ր մ ա ռ ե ա յ մ է կ մ ե ծ ա ւ ա զ ա ն ,
 Ո ո ւ բ է ն ա ւ ա զ ա ն ն ա յ ն լ ի ք ը ջ ր ո վ՝
 Ե ր ե ր կ ա ն գ ն ե ց ո յ ց յ ի շ ե ա լ կ ա յ ս ե ր ք ո վ .
 Մ է ծ ա մ ե ծ ք Յ ո ւ ն ա ց ե ր ո ր զ ա յ ն տ ե ս ի ն ,
 Կ ա յ ս ե ր ա ռ ա ջ և չ ա ր ա խ ո ւ ց ի ն ,
 Թ է է ս ք ա ն ո յ ժ ո ր ո ւ ն ի ա յ դ Ա ր մ է ն ,
 Մ է կ օ ր պ ի տ ի ա ռ ն է վ ր է ժ մ ե ր ա զ գ է ն .

Կայսրը հաւանեալ զիսորհուրդ չարեաց,
Ռուբեն Դիւցազնի աչքերը հանեաց,
Հրամայեց նրանց բանտ ձգել կըկին՝
Լևոն արքային և երկու որդին.
Ռուբեն ՚ի բանտի ստացաւ իւր մահ,
Լևոն կորուսեալ թագ, գայիսոն, գահ,
Մահն Ռուբենի եղեւ նմա կսկիծ,
Նա ևս գիւր մահ ՚ի բանտի եգիտ.
Մնաց կենդանի միմիալն Թորոս՝
Չունելով այլ լուս բաց ՚ի Քրիստոս:
Զկնի քանի մի ժամանակաց՝
՚Ի գութ շարժեցաւ կայսրն Յունաց,
Թորոսին իսկոյն ՚ի բանտէն հանեց,
՚Ի ծառայութիւն իւր ատեան կարգեց,
Եւ Թորոսն իրան ազնիւ բնութեամբ
Ծառայէր նմա հաւատարմութեամբ:

ԱՆԱԿԱՆԱԼ ԴԻՊՈՒԱԾ.

Երբեմնապէս կարեն դիպուածք,
Մեղմել զցաւս իրբև չԱստուածք,
”Ս Է Յ Ե Ա Դ“

Մէկ օր Թորոսը Կոստանդնուպոլիս—
Սիրտը գառնութեամբ լի ման էր գալիս.
Երբ նա շրջելով ծովի մօտ հասաւ,
Ուղեց զբունուլ՝ մէկ նաւակ մտաւ.

Նոյն ժամայն եմուտ ՚ի նոյն իսկ նաւակ՝
Կին մի ըստ ձեւոյն ազնիւ և աւագ,
Երեսը ծածկած խիստ նուրբ շղարշաւ,
Զոր Մահմեդականք կոչում են չարշաւ,
Նախ զըռցեց նա ընդ նաւապետին,
Յետոյ զայն արար և ընդ Թորոսին.
Հովը սկսաւ մեղմով սաստկանալ՝
Այն օտար կնոջ երեսը բանալ՝
Թորոս երբ տեսաւ նորա պատկերը,
Սրտի միջումը բորբոքվեց սէրը:
Կինը Թորոսին տեսեալ յայն գրութեան,
Թէ աչունք նորա ուտել կամին իրան,
Թորոսին իրան մօտ հրաւիրեաց,
Յայտնիր ինձ եղանակ դու ով ես ասաց,
Թորոս պատասխան տուաւ նմա այսպէս,
Հայոց արքայի որբ որդին եմ ես,
Հայրս, եղբայրս ՚ի բանտի մեռան,
Իսկ ես ծառալ եմ այժմ կալսեր տան,
Բայց և ես կամիմ ՚ի ձէնջ հարցանել՝
Եթէ չունեցիք կամք իմ ալպանել՝
Կամ թէ չիցէ ձեր անձին ծանրութիւն,
Կամ վասն իմ լոյժ մեծ յանդգնութիւն,
Աղաչում եմ որ զթալով յայտնես՝
Տիրուհի ինձ թէ՝ արդեօք դու ով ես:

Կինը հառաջմամբ պատասխան տուաւ,
 Թէ տեսնում ես որ հազել եմ սեաւ,
 Սա ապացոյց է որ ես եմ ալրի,
 Մահը խփեց ինձ սուր երկսալրի,
 Ամուսին իմ էր զօրավար Յունաց,
 Ի կայսերուհւոյ մերձ ազգականաց,
 Ալժմ չորս ամիս է որ նա մեռաւ,
 Շատ գանձ և կալուածք ինձ համար թողաւ.
 Ալժմ գնում եմ մէկ ամարանոց՝
 Կամիմ նեղութիւն տալ հրամանոց,
 Որ թէ կամենաք պարտաւորել զիս՝
 Ենորհ ցոյց տալով եկեք դուք ընդդիս,
 Եղերուք այսօր ինձ հիւր թանգագին,
 Որ անդ պատմեմ ձեզ՝ իմ անցքը մին մին:
 Թորոս տիկնոջէն եղեւ գոհունակ,
 Վասն զի անչափ էր շնորհունակ.
 Երբ որ նաւակը հասաւ եղերաց՝
 Բարձրաշէն տուն մի նրանց երեաց,
 Որ յուժ փառակերտ էր և եռալարդ,
 Դ նմա զանազան սպասաւորաց կարգ,
 Որք վասն իրանց տիկնոջ պատուական,
 Պատրաստել էին՝ ճաշ ամենարժան::
 Թորոսի միտքը այն կին հասկացաւ,
 Հանեց գրպանից քսակ լի ոսկաւ,

Քսակի վերալ գրած էր Զապել՝
 Ետ Թորոսին այն քսակ ոսկեթել.
 Ահա սա է իմ անունս ասաց,
 Պահպանիր մօտիդ չի ձգես ի բաց.
 Թորոս էառ զայն շնորհակալութեամբ,
 Գոհացաւ նրանից քաղցը բնութեամբ:

Զ Օ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Կ Ր Թ Ո Ւ Թ Ե Ա Ն.

Ով որ չունի գանձ կրթութեան,
նա մեծ արատ է մարդկութեան:
„Ս է Յ Ե Ա Դ“

Որպէս ՚ի ճաշի նոյնպէս յետ ճաշոյն,
 Զապել զննէր ձև իւր կալուածոյն.
 Երբ սկսեցին շրջագայելոյ՝
 Ամեն շինուածոց մէկ մէկ նալելոյ՝
 Յոյժ զգուշութեամբ զնթացս իրերաց՝
 Դիտէին զի մի՝ լիցին սխալուած:
 Զապել մեծատուն լինելով Յունաց,
 Իշխանաց մէջ էր արել աչքը բաց,
 Ունէր նա ազնիւ համարձակութիւն,
 Որ է իշխանաց թանգ ունակութիւն,
 Զայս երբէք չունին Ասիացի կանալք,
 Օսմանցիք, Պարսիկք, Վրացիք և Հայք.
 Զի մեծ շնորհք է իգական սեռի՝
 Լինիլ համարձակ, յարատոյ հեռի.

Մէկ կողմով լինիլ կարգին ամօթխած,
 Բայց չի ունենալ գերես կարմրած.
 Միւս կողմից լինիլ աներկիւղ, վստահ,
 Բայց երբէք չ'լինիլ՝ անամօթ անահ.
 Սա է թանգ շնորհք սեռին իգական,
 Եւ յալտնի նշան բարեգործութեան.
 Սոքօք ցուցանին յատկութիւնք նոցին,
 Սոքօք ճանաչին վատն ու արժանին,
 Սա է իսկ կանանց վարքն գովելի
 Սոքօք նոքա լինին յաչս սիրելի:
Զապել հարուստ էր այս ունակութեամբ,
 Առաքինական ընդունակութեամբ,
 Թորոս ևս չէր այս մասին աղքատ,
 Թէև կըել էր չարչարանք լոյժ շատ.
 Աշակերտ եղեալ տարաբաղդութեան՝
 ՚ի Յունաց ծաղկեալ կայսերական տան,
 Որ Եւրօպայու մէջ էր առաջին,
 Եւ տիրէր յախժամ բոլոր աշխարհին.
 Թորոս չէր իբրև խղճալի գերի,
 Կամ գահակորոյս արքայի որդի,
 Այլ լաւ գիտելով Յունաց բուն լեզուն,
 Յոյժ քաղցրախօս էր զգաստ և արթուն.
 Սովաւ այն տիկնոջ նա աչքը եմուտ,
Զապել նրանից քաղեց շատ օգուտ,

Քանզի բոցալի զրոյցք Թորոսին՝ աշխատ
 Արին նպատակ Զապելի հոգին: Այս
 Յարագայ վիճակութիւնը առաջ առաջ
ՍՈՒՐԵԱ ՍԵՐ.
 Անդիք սիակ նու զմարդութիւնը առաջ
 Ինչ մարդու մէջ գոյ սուլը սէր՝
 Նա է ազնիւ բնութեանց տէր:
 „Ս է Յ Ե Ա Դ“
Զապել և Թորոս նստեալ պարտիզի՝
 Ծաղկօք զարդարած հովանոցի միջի,
Զապել հիացած Թորոսի խօսից
 Ժողովէր զոր ինչ լսէր Թորոսից.
 Յանկարծ կոչեց թէ ով իմ սիրական.
 Ինչ կուլէր որ ընդ առաքինութեան՝
 Ունենալին և սուլը անկեղծութիւն,
 Որ է իմ սրտիս վերին ցնծութիւն:
 Թորոս զարմացեալ ասաց նմա Տիկին,
 Միթէ պարզութիւն գոյ էլ սաստկակին,
Զապել լուեալ զյս քաղցրութեամբ ժպտաց,
 Թորոսի սիրտը հրճուանօք թնդաց
 Միտքը դարձրուց գէպ ՚ի Զապելն
 Սպասեց նրանից իւր բաղդի ելն:
Զապելը ասաց Թորոս ինձ ասա,
 Քոյ սէրը ամեն կողմից ազատ ա,

Թորոս պատասխան տուաւ թէ տիկին,
Թէւ ես այժմ եմ Յունաց գերին,
Բայց սիրտ իմ ազատ է տիփ կապանաց,
Քանզի ես ազատ հոգւով եմ ծնված.
Եթէ քոյ կապանք իմ սրտիս վերան՝
Նա իմ հայրենեաց կարօտ է միայն:
Զապել իւր սրտից թառանչ բաց թողեց՝
Նովաւ իւր հոգւոյ ցաւը դարտակեց,
Ձեռը պարզեց առ Թորոս և ասաց՝
Եթէ չորս ամիս վաղ, իր պատահած,
Շատ արատութեանց կլինէիր պատճառ,
Չէր կարող մնալ ինձանում պատկառ,
Պարտք ամուսնութեան կ'լինէր ոտնակոխ,
Որով միմիան կանայք թուին ճոխ.
Անշուշտ ուրացեալ ես պարկեշտութիւն՝
Պիտի լնտրէի սիրոյդ հեշտութիւն.
Այժմ առաջի Աստուծոյ և մարդկան,
Երբէք չեմ կարող մնալ պարտապան.
Այժմ չեն կարող հոսանք արտասուաց՝
Այրի աչքերըս առնել կրկին թաց.
Թորոս ասա ինձ դու անկեղծութեամք՝
Վեհ անձն հոգւոց արժանի բնութեամբ՝
Կարող եմ արդեօք համարձակ ասել՝
Թէ դու իմս ես՝ այժմ անարգել:

Ա Թ Ա Փ Ի Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն.
Առաջնորդ մասունք բառ
Առաքինութիւն է բան յոյժ թանգ,
Չես ստանալ մինչ չառնես ջանք:
»Ս է Յ Ե Ս. Դ.“
Զապելից առաջին Թօրոսը չոքեց՝
Նորա լոյս ձեռը իւր ձեռով բռնեց,
Ասաց միթէ իմ ամեն շարժմունքն՝
Չեն յալտնում սրտիս սուրբ զգացմունքն.
Որ քոյդ լինիլն եմ միայն ցանկանում,
Բայց միայն պարտս ես չեմ մոռանում,
Տիկին թէ ի միջի ալս երջանկութեան՝
Չ'մոռանամ, կարդ պարտաւորութեան՝
Ի մտի պահեմ ես զայն առարկայն՝
Որ երանութեան է առիթ միայն,
Եթէ քոյ կենաց ապահովութեան՝
Չի նայեմ սիրոյս տամ միայն դարման՝
Չեմ համարձակիլ սիրտ քոյ դողանալ.
Կամ քոյ անարատ ձեռներիդ ձեռք տալ,
Մինչ հայր կայսր մեր՝ իմացեալ զալս բան՝
Չառնիցէ արժան իրան հաճութեան.
Թարց որոյ իման անշուշտ ես և դու՝
Կարող ենք դառնալ մատաղ նախանձու.
Կամ թէ անսահման չարախօսութեան՝
Որպէս Ոռւբէն եղև քաջութեան:

Զապել թախճագին ժպիտ ցոլց տալով
 Ասաց Թորոսին հոգւով ցնծալով՝
 Դու զիս յաղթեցեր առաքինութեամբ,
 Քանզի չես յաղթված սիրութեամբ.
 Զի զոհ սրտիդ մէջ հարկ իշխանութեան,
 Եւ պայման հաստատ պարտաւորութեան.
 Յուսամ լինիւ միշտ ընդ քեզ երջանիկ,
 Այսուհետև մեզ անջատումն չեք.
 Արք երթանք մեք առ մեծ կալսրն մեր,
 Պատմենք նմա մեր սուրբ սիրոյն պատկեր
 Զի մեք պատկանիմք լսու վերին կոչման՝
 Միմեանց, զի չէ սա մարդկալին բան.
 Ես գոլով ազատ դու նմանապէս՝
 Ով կարէ ինձնից հեռացնել քեզ:
 Թորոս համբուրեց ձեռն Զապելի,
 Ասաց ալս համբոյր էր յոյժ յարգելի,
 Տուր ինձ իրաւունք որ ես անարգել,
 Կարենամ կոչել զքեզ լոկ „Զապել“
 Զի երբ նկարէ լեզուս զալս անուն,
 Սիրոս լինում է երջանկութեան տուն.
 Հաւատացիր որ ալս իմ խօսքերըն՝
 Մաքսուր են ինչպէս սուրբ է քոյ սէրն:
 Գիտեմ զի գու ես հարստութեան տէր՝
 Ես ես ունիմ Թիւցագնական սէր.

Խնայեա Զապել զի ես դեռ տղայ
 ՚ բարձրութէնէ անկեալ ափշեցայ.
 Քոյ սիրոյդ մէջն է իմ տիփ կորուստն,
 Նովաւ եմ ես ՚ի մարգկանց հարուստն:
 Ինձ քոյ բարբառիդ քաղցր եղանակ,
 Պիտի հայրենեաց լինի փոխանակ.
 Անկեղծ լորդորանք քոյդ արդար հոգով,
 Ե փոխան նախնեաց իմոց աթոռուու.
 Սիրո քոյ գանձարան սուրբ պատուիրանաց
 Է փոխան իմոց տիփ ազգականաց Քզ
 ՀԱԾՈՒԹԻՒՆ.

ՀԱԾՈՒԹԻՒՆ
 Անկեղծ լորդորանք քոյդ արդար հոգով
 Անկեղծ լորդորանք քոյդ արդար հոգով
 Կը գառնայ առիթ՝ տհաճութեան
 Ազգայի առիթ պատուաց անոն ՍԵՅԵՍ ԱԳ

Ինչ բառ որ ելնէր Թորոսի բերնէն,
 Սիրոյ բոց հանէր Զապելի սբաէն.
 Թէ ի՞նչ էր զգում հոգին Զապելի,
 Սուրբ սիրահարաց է սա գիտելի.
 Սա ըստ Պարիսին և Հեղինէին,
 Երբէք յանկութեան արատ չունէին.
 Եւ ոչ կոյր մանուկն Երոդէս,
 Բոցափայլ ջահով վառել էր ՚ի տես.

Բազմաց՝ ի նոսա հուր Ավրոդիտեան,
 Բայց այս հուրն էր ճիշտ պատկեր նրան
 Զոր Հիմէնեռս՝ ի սուրբ սեղանի՝
 Վառեաց զգալով թէ նմա պատկանի.
 Քանզի խնդալով պահապան հրեշտակ՝
 Նարօտ հարսանեաց ոլորէր տաք տաք
 Որոյ քաղցրաձայն նուագերգութիւն,
 Տալիս էր մեծ լուս նրան սրտերուն,
 Զի երբ դադարում է նուագածուն,
 Զէ խզվում դեռ ձայն՝ նորա լարերուն:
 Սոյնպէս և հոգիք թորոս, Զապելին,
 Իսկ պատկեր էին՝ ջութակի թելին,
 Որք լոյժ ներդաշնակ՝ հնչէին զձայն,
 Զոր սիրտ սիրահար՝ գիտէ զայն միայն:
 Մօտ էր երեկոյ երբ այս սիրահարք,
 Ստամբօլ դարձման քալից եղին կարդ.
 Ճանապարհին շատ բաներ խօսեցան,
 Մինչ կայսերական պալատը հասան,
 Յորում անհաշիւ Հայոց թագաւորք,
 Անարգեցան կամ եղեն պատուաւորք.
 Թորոս կարծեց թէ հոգիք արքալից —
 Հայոց վրէժիսդիր լինին նրանից,
 Որ նա հայկական ազգի վիճակն՝
 Դնում է այն Յոլն կնոջ ոտի տակն.

Կամի բարե մնաս ասել իւր ազգին,
 Մոռացութեան տալ՝ Հայաստանն անզին:
 Բայց երբոր հայեց Զապելի դէմքին,
 Ալս կարծիքներից ազատվեց հոգին:
 Քանզի հոգիք հին Հայոց արքալից՝
 Եղեն՝ ի ծածուկ նմա ձայնակից՝
 Թէ Զապել պիտի կրկին Թորոսին՝
 Առնէ արժանի Հայոց աշխարհին:
 Խորհուրդ արարին առ կայսրն գնալ
 Իրանց սիրտները առաջին բանալ,
 Զապել ազգական էր կայսրուհուն,
 Ի ձեռն իւրոյ մեռեալ ամուսնոյն.
 Վասնորոյ ծանօթ էր Զապել կայսեր,
 Զապելի շահը նա միշտ որոնէր,
 Երբ ետես միատեղ Զապել թորոսին՝
 Զարմանք ծագեցաւ կայսեր երեսին,
 Ասաց ձեր խորհուրդ թէւ չգիտեմ,
 Միայն ձեզ անկեղծ՝ ես ասել պիտեմ,
 Թէ մէկ օր պատկիք դուք ընդ միմեանց,
 Իմացէք որ զայս ասեմ՝ ի սրտանց,
 Որ ձեր այժմեան կամք՝ ինչ որ լինիցի,
 Պիտի անպատճառ՝ ի կատար հասցի.
 Ասեմ ձեզ զի ես ցանկանամ հոգւով՝
 Որ գուք միանաք՝ պատկի կապով:

Հ Յ Ա Մ Ա Ն Ե Ւ Պ Ս Ա Կ.

Ինչ գործ եղեւ առանց հըաման,
Նա չի լինիլ մէկ հաստատ բան:
”Ո Ե Յ Ե Ա. Դ“

Զապել և թորոս կայսեր առաջին,
Չոքան և իրանց կամքը պատմեցին.
Թէ ի՞նչպէս նաւու մէջ պատահեցան
Եւ ընդ միմեանց՝ հետ ծանօթացան,
Բայց առանց նորին վեհափառութեան,
Միմեանց խօսք տալ չհամարձակվեցան.
Կայսրը այս բանին հոգւով հաճեցաւ,
Նոցին պսակման՝ շուտ հըաման տուաւ,
Քանզի գիտէր զի այս կապակցութիւն,
Իւր կայսերութեան է մէկ հաստատ սիւն
Նոքա պսակվեցան ՚ի նմին գիշերի,
Բաղզը թորոսի՝ ծաղկեց անթերի.
Կայսրը գիտելով թէ ովէ թորոս՝
Նորա պսակման եղեւ բարեխօս,
Գիտէր երբ որ նա ՚ի Կիլիկիալ դառնալ,
Իւր իշխանութիւնն անդի կը բառնալ,
Ուզեց՝ թորոսի սիրտն նազելի՝
Կապել ընդ սրտին իւր Յոլն Զապելի.

Քանզի Զապելի գեղն էր այնպէս գանձ
Որ կարէր լինիլ Թորոսին պինդ սանձ.
Քանզի թորոս էր մէկ Լեփաթան,
Զապել էր շղթալն բռնելու նրան.
Կայսրը Զապելին կարգեց մէկ զուղակ՝
Որ գնէ թորոսի ոտներին պինդ փակ.
Գիտէր որ Զապել կարող է փութով՝
Թորոսի կամքը՝ ձեռք ձգել խելքով.
Որ նա մոռանալ զարին Հալաստան,
Եւ զաթոռ նախնեաց յանձնէ մոռացման:
Երբ թորոս էառ ձեռքն Զապելի,
Եւ լաչս կայսեր եղեւ լարգելի,
Յայնժամ նախարարք և իշխանք Յունաց
Զօրապետք և դասք շատ մեծամեծաց,
Որք միշտ Թորոսին գերի կարծէին,
Իրանց սրտումը ոխ, նախանձ եղին,
Թէ զնդէր էառ և զայն սիրուն կին՝
Եւ նորա անչափ կայքն և ոսկին,
Բայց կայսրը անչափ սէր եցուց նմա,
Որ նա իւր նախնեաց գահը մոռանալ,
Թէ և իսկ սա էր խորհուրդը կայսեր,
Նախասահմանութեան կամքը տես ի՞նչ էր:

Ե Ր Ջ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Յ.

Ով եհաս սրտի ցանկութեան՝
Նա է աթոռ երջանկութեան։

Առաջի աւուրքը զկնի պսակին
Զապելը հայեց թորոսի դէմքին,
Ետեսնա յայնժամ է ուրախ լինում,
Երբ իրան հետ է միայնակ մնում,
Կամում է միայն իրան հետ խօսել,
Իրան հետ միայն ասել և լսել՝
Միով բանիւ գգուիլ նրան հանապազ,
Վայելել նորա սէրը աննուազ,
Երբ որ Զապելը հաստատ իմացաւ,
Թէ թորոս կամի զբաղիլ նովաւ,
Թէ չէ սիրում նա կեանք շփոթալի,
Թէ շռայլ վարքն է նմա ատելի,
Թէ թորոս կամի իրան վայելել,
Եւ անկեղտ սիրով իրան միշտ սիրել,
Եթող զարքունիս նա կայսերական,
Յորում նա փայլէր Արևու նման,
Եթող իւր շքեղ ապարանքներն,
Որ նախշել էին հրապարակներն,

Քաշուեց և գնաց մէկ այնպիսի թաղ,
Ուր չէին կարող տեսնալ մէկ դօնաղ (*)

Իւր տներիցը ընտրեց այնպէս տուն,
Որ էր առանձին շքեղ, վառվուռն,
Զի անդ կարասցէ թորոս անարգել,
Իրան անարատ սէրը վալելել,

Տեսաւ Զապել որ այսպիսի կեանքը,
Էր իսկ թորոսի ըղձալի կամքը՝

Եւ ոչ թէ մըրկեալ կառաւարութիւն՝
Կամ հիւրոց կեցեալ մարդաւարութիւն՝

Ուրախացաւ զի իւր չքնաղ վիսայն՝
Կամում է լինիլ իրանը միայն։

Երբ սոքա այսպէս խիստ առանձնացան՝
Իսկոյն միմեանց բարքը հասկացան,
Օր աւուր տեսին միմեանց հոգւոյ մէջ,
Առաքինութեանց քաղցը ել և էջ,

Որ յառաջ քան զայս նրանց չէր յայտնի,
Եւ մերձ լինելով լաւ յայտնի կլինի։

Յետ այնու նոցա անքանակ սէրը՝
Բժշկեց նրանց նախնեաց ցաւերը,

Զմայլած էին միմեանց տեսոյն,
Ամենակատար սիրահարց հանգոյն։

Զոր չկարէին նկարել լեզուօք,
Զայն նկարէին քաղցը արտասուօք,

(*) Դօնաղ Տաճկերէն հիւր է նշանակում։

Նովաւ կարէին գիտել թէ մըշափ,
Նրանց սէրն է անեզը, անչափ,
Ըմպելով սիրոյ սուրբ գինւոյ թասն՝
Անցուցին կենաց առաջին մասն:

ԾԱԾՈՒԿ ԽՈՐՀՈՒՐԴ.

Որտեղ եղե խորհուրդ ծածուկ՝
Անդ խրախ կուլինի կամ սուգ:
,,ՍէՅԵ Ա. Գ.՝”

Այս միջոցները թորոս միշտ զգայը,
Որ Զապելի մէջ ծածուկ խորհուրդ կալը.
Բայց զի սա նրան չէր ուզում յալտնել՝
Թորոս էլ չուզեց նրանից հարցանել.
Քանզի Զապել ի գիշեր ժամանակի՝
Տունից ելանէր լոյժ յաճախակի.
Թողեալ զթորոս յանկողնի քուն,
Յետ քանի ժամուց դառնայը նա ի տուն.
Եւ միշտ կամումէր այս բանը յատուկ՝
Պահպանել իւր այր թորոսից ծածուկ.
Նոյնպէս և թորոս շատ էր ջանք անում,
Յուցանել թէ նա զայս բան չէ գիտում,
Քանզի հոգւով էր նմա հաւատացել,
Նորա սուրբ վարուց հիմն հասկացել,
Զի Զապել տալիս չէր առիթ նմա՝
Որ ձախողակի միտք ունենալ:

Սկսեալ նախկին օրէ հարսնութեան՝
Զապել թորոսին կասէր միշտ զայս բան,
,,Որովհետեւ լաւ հայէրիցն ես,
Պիտի հայաւոր ինձ կարդացնես“
Հայերէն լեզուն նա շուտ սովլեցաւ,
Իբր նախ գիտէր յետոյ մոռացաւ,
Կամ վարժապետի սէրն էր պատճառ՝
Որ նա շուտ խօսեց հայկական բարբառ.
Մինչ ցայն որ իրան ազօթքն հեշտեաւ՝
Սկսաւ ասել հայերէն լեզուաւ:

Թորոս երկնչէր մի գուցէ Զապել
Յունաց մօտ սկսէ հայաւոր խօսել,
Նովաւ հանդիպի ինքն անբաղդութեան,
Քանզի կարողէր տուն կայսերական՝
Ասել Զապելին՝ թորոս արար հայ,
Բայց Զապել նրան չի թողեց երկբայ,
Քանզի միշտ գնայը Յունաց տաճարը՝
Ունելով իր հետ սուրբ սիրահարը.
Յունաց Սիօնն էր Ալեա-Սօֆիայն,
Յոյն մեծամեծքը մտածել սկսան,
Թէ Զապել ունի անշուշտ թորոսին,
Պարձուցանել ի հաւատ իւր ազգին:

Երբ կանցանէր օր մի կիւրակէ՝
Որ կայսրը նրանց իւր մօտ չի կանչէ,

Կայսերուհին չէր լոյժ գոհ Զապելից՝
Որ նա կտրել էր ոտք իւր մօտից.
Ինչ օր Թորոսին նա եղել էր կի՞ն՝
Նրան չէր տեսել դեռ կայսերուհին.
Զի Զապել նմա էր մերձ ազգական,
Վասնորոյ կայսրը հարս կոչէր նրան:
Զապել երբ ետես որ իւր Թորոսին՝
Սիրումեն կայսրը և կայսերուհին,
Երկեաւ մի գուցէ Յունաց կայսեր թագ՝
Թորոսի համար լինիցի նպատակ.
Իսկոյն միտք երեր բան Մօրիկ կայսրին՝
Ուզեց բժշկել այս ցաւն ուժգին,
Վասնորոյ յատնեց Թորոսին **Զապել**՝
Թէ զերուսաղէմ կամի տեսանել.
Միատեղ խնդրեցին կայսրէն հրաման,
Եւ նա հաճութեամբ թոյլ ետ որ գնան:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ.

Ճանապարհորդութիւն սիրող մարդը՝
Քաղէ այս կենաց հոտով վարդը:
”Ս է Յ Ե Ա. Դ:“

Զապել պատճառաւ ուխտագնացութեան՝
Սկիզբն արար իւր կայից վաճառման.

Տներ, կալվածներ և ազարակներ,
Դաշտեր, գիւղեր և Ամարանոցներ,
Վաճառեալ զնոսա դարձուց ի գրամ,
Ուզեց տեսնել կայսրին նա վերջին անգամ.
Զապել և Թորոս կայսր մօտ գնացին,
Կայսրն և կին իւր անչափ խնդրացին,
Վասն բարեպաշտ նոցին յանկութեան՝
Որ նախկին պարտն է մարդկային բնութեան.
Յետոյ կայսրն և կայսերուհին՝
Ընդ մեծամեծաց իրան Յոյն ազգին՝
Ճանապարհոցին նրանց մինչ ցնաւ,
Աշխարհ լուաւ զայս փառաւոր համբաւ,
Կեռ Մանուէլ էր ժառանգն կայսեր,
Տեսեալ զնոսա այսքան պատւոյ տէր,
Յայտնի նախանձուեց իրան սրտումը՝
Սկսեց խօսել իրան մտքումը,
Ասաց միթէ այս հայ ազգի գերին՝
Արժան էր սիրոյ Յունաց կայսերին,
Սա երկար բանտի մէջ էր կապանօք՝
Ի՞նչ փոլիթ էր պատուել այս քան յարգանօք.
Զայս խօսքը լուան Թորոս և **Զապել**՝
Սկսան իրանց վերջը մտածել՝
Զի ժառանգ գահին ոսոխ է իրանց,
Միշտ պիտի լարէ նրանց ոտին ցանց:

Թորոս և Զապել ելին Ստամբօլից,
 Յաջող հողմն էր նրանց ուղեկից,
 Շուտով նոքա սուրբ Երուսաղեմ Հասին,
 Ամեն տեղ առատ տրօք ուխտ արին,
 Մինչ սուրբ քաղաքի նոքա մէջն էին
 Ստամբօլէ նրանց Համար գուժ բերին,
 թէ Պերփերուժէն-Յովհաննէս մեռաւ,
 Եւ կեռ-Մանուէլ նորա տեղը նստաւ:
 Թորոս չիմացաւ թէ որպէս անէ՝
 Պերփերուժէնը ի գերեզման է՝
 Զէ կարող փըկել Մանուէլի ձեռից՝
 Զի իշխանք Յունաց են նմա կամակից.
 Զէր ուղում պատմել զայս բան Զապելին՝
 թէ „ո՞նց Ստամբօլ դառնանք մեք կըկին“,
 Զէր կարծում թէ այն սիրուն Հարուստ կին՝
 Վասն իւր սիրոյն թողքէ Հայրենին:
 Յանկարծ Զապելը ասաց Թորոսին՝
 „Մեռաւ կալորը որ էր մեր սիրելին,
 Եկն փառաւօն որ սուրբ Յովսէփին,
 Ոչ պատռեց և ոչ տուաւ արժանին:“
 Առաց ես տկար բնութեամբ կին եմ,
 Թէ իմ պատիւը պակասած տեսնեմ,
 Որ ունէի ես՝ ի դրան կայսեր,
 Զի մնալ իմ մէջ դատար և Համբեր.

Մի գուցէ Համբաւ իմ հարստղութեան՝
 Եղիցի պատճառ քոյդ անբաղդութեան.
 Զի Պիգմալիոն շատ ունի աշխարհ՝
 Դիդոնայ լինիլն է ինձ անհնար.
 Արի Թորոս մեր շահը Հասկանանք՝
 Կրկին Ստամբօլ մեք չի ետ դառնանք:
Թորոս Հիացեալ խօսիւք Զապելի՝
 Ասաց միթէ դու կամիս նազելի՝
 Յուցանել մարդկանց մէկ հրաշալի ջանք՝
 Քոյ Հայրենիքէն երթալ յաքսորանք.
 Թողուլ այնպիսի բազմամարդ քաղաք՝
 Որ քաղաքներին է գլուխ և թագ.
 Այն աշխարհը որ քեզ ընտելացուց՝
 Քեզ այդ թանգագին Հասակին Հասոյց:
Զապել վաթթվեց, Թորոսին ասաց՝
 Զի կարծես դու զիս ատող Հայրենեաց՝
 Իմ Հայրենիքը այժմ մէկ դու ես՝
 Անդ է ինձ ախորժ ուր լինինք դու, ես.
 Անդ ուր որ զքեզ չեն կոչել գերի՝
 Անդ է իմ հոգւոյս Հանգիստ անթերի:
 Թորոսը ասաց ով իմ ամուսին՝
 Միթէ Կիլիկիոյ քաղցը Երեսին՝
 Պիտումէ մի օր լինիմ արժանի՝
 Եւ կոչիմ արքայ մեծ Հայաստանի:

Զապելը ասաց նախասահմանութեան՝
 կարգը ո՞նց կուլի տալ փոփոխութեան.
 Յիշիլ էն օրը որ ծովի վերալ՝
 Քոյ տեսութեանդ ես արժանացալ.
 Իմ միտքս նա չէր որ ալը ունենամ,
 Այս բանը որ սրտէս չէր անցել անգամ.
 Այլ կամում էի ինչքան գանձ ունիմ,
 Մէկ երևելի բանի վերալ մսխիմ,
 Եսգուց աւել ի՞նչ բան կը գտնուի,
 Որ քոյ աթոռդ կըկին հասատուի.
 Երբ որ հասանենք 'ի Կիլիկեայ՝
 Միթէ չենք գտնիլ մէկ քանի հատ Հայ,
 Որք քեզ ճանաչեն պատուեն ըստ կարգին,
 Տեսեալ Արքալի որդին վերստին:
 Երբ իրանց ուխտը տիփ կատարեցին,
 Անտի չուեցին Եաֆալ գնացին,
 Այն տեղ գնեցին Եւրօպայու նաւ,
 'ի Կիլիկեայ նաւեցին նովաւ:

ՀԱՅ ԲԵՆԻ Փ.

Ով որ չէ սիրում հալրենիք՝
 Նորա համար ցնծութիւն չիք:
 „Ս Ե Յ Ե Ս Դ“
 Թորոս հայրենեաց երբ հողը տեսաւ,
 Նորա ցամաքի վերալ ոտք դրաւ,

Սկսաւ նորա գետնին համբոյր տալ՝
 Փառք տալ Աստուծոյ հոգւով գոհանալ.
 Վասն զի երբէք մտօք չէր անցել,
 Թէ նա Հայաստան ունի տեսանել:
 Երբ ետես Յունաց գոռ իշխանութիւն՝
 Ունի հայերի մէջ հաստատութիւն,
 Յայտնի շուարված սառած մնաց նա,
 Մի՞ գուցէ իրան փախուստն իմանվայ,
 Ազգ Յունաց նրան միւս անգամ բռնէ,
 Անզերծանելի բանտի մէջ դնէ:
 Իւր մահուն համար նա չէր երկնչում,
 Միայն Զապելի վերջն էր քննում,
 Թէ ո՞նց կանցանի եղկելոյ օրը՝
 Զի Յոյնք գույժ չունին ծնող եղբօրը:
 Յայսմ նեղութեան մէջ Զապել ասաց՝
 Թորոս խօսքերս լոիր և իմաց,
 Մինչ յարդ էիր գու 'ի միջի գերութեան,
 Գերին չի լինիլ առանց թերութեան,
 Գուցէ քաջութիւն քոյ և մեծ հանճար՝
 Զարչարանաց մէջ եղել են տկար.
 Հիմայ հայրենի աշխարհդ եկար,
 Քոյ իշխանութեան սահմանին հասար,
 Պիտումէ գու աստ թագաւոր նստիս,
 Նորա բարիքը վայելես ընդիս,

Փոյ մէջը պիտեմ հիմալ տեսանել՝
 Առաքինութիւն զոր լացն էր վանել.
 Յուսամ զի դու քոյ հզօր հանճարօք,
 Աշխարհի միջին մեծ լինիս փառօք.
 Գիտեմ որ դու զիս գգուելոյ համար՝
 Կարես հալածել թշամիս հազար.
 Բայց գեռ չէ հասել քաջութեանդ ժամ,
 Թողարակ այժմ ես իմ հնարքս հոգամ.
 Այն գիշերները որ դուրս էի գնում,
 Այս օրվան համար էի պատրաստվում.
 Իսկ երբ կը հտանի ժամը քաջութեան՝
 Յայնժամ քոյ հերթն է զի չէ նա իմ բան:
 Թորոս ասաց ես ամենը գիտեմ,
 Վասնորոյ հիմալ քեզ յալտնել պիտեմ,
 Զի երբ գիշերը դու անքուն մնալիր՝
 Իմ երջանկութեանց ձեր հոգալիր.
 Որչափ որ շատ է իմ մէջ քոյ սէրն՝
 Նոյն չափ էլ շատեն քոյ հնարքներն.
 Թէպէտ միշտ եմ քոյ օգնութեան կարօտ,
 Միայն ասեմ ես բաց և կարճարօտ,
 Զի քոյդ օգնութեան ալսօր անչափ ես-
 Կարօտ եմ, արա Զապել, ինչ գիտես:
 Զապել նաւիցը ելաւ ծովի ափն՝
 Այնքան գանձիւք որ չի գիտել չափն,

Քարափի միջին եգիտ մաղարայ, (*)
 Տեսաւ իւր մտքին նա լոյժ լարմարայ,
 Անդ թագոյց զգանձ և ծառակս իւր տան՝
 Թորոսին կարգեց նրանց պահապան.
 Իսկ ինքը զգեցաւ արականի շոր՝
 Ընդ ինքեան էառ երկու սպասաւոր,
 Գնաց ծովի քով եղեալ հայոց գիւղ,
 Թարց կասկածանաց և առանց երկիւղ:
 Տեսաւ գիւղի մէջ մէկ տաճար փլած,
 Երկու ծեր նորա մօտումը նստած.
 Գիտաց որ մէկն է գիւղի քահանան՝
 Եւ միւսն անպատճառ է երեսփոխան:
 Զապելը գնաց նստեց նրանց հետ,
 Յունարէն լեզուաւ նրանց ողջոյն ետ.
 Թէ և սոքա նրա բարել առին,
 Բայց երբէք խօսակցութիւն չի արին.
 Ընդ միմիանց խօսումէին հայերէն,
 Քանզի երկնչում էին Յոյն ազգէն:
 Երեսփոխանը Տէր Տէրին ասաց,
 Յոյնք խաչապաշտ են վաղուց եմ լսած,
 Ուրեմն ընչու մեր եկեղեցին՝
 Նոքա անխնայ հիմնից քակեցին.
 Եւ մեր հայերին նեղեցին ալսքան,
 Նմա պատասխան տվաւ քահանան —

(*) Տաճիկք քարանձաւին մաղարայ կասեն.

Թէ աստ մէկ քանի տղալք մեր աղղին՝
Յունաց ազգի հետ սաստիկ կռվեցին,
Պարիսպ տաճարին իրանց բերդ արին՝
Յունաց ազգէն շատ անձինք կոտորին։
Յոյնք մեզ այլ պատիւ տալ չի կարացին՝
Միայն քակեցին մեր եկեղեցին։
Զապել զայս լուեալ ասաց Յունարէն՝
„Երեխ անգոհ էք Յունաց ազգէն。“
Նոքա ասացին Յոյնը ոնց կարէր՝
Նեղել մեզ թէ մեք չլինէինք անտէր,
Մեր Լևոն արքալն ընդ Ծուբենին,
Մեռան մեք նրանց չենք տեսնալ կըկին.
Իսկ Թորոս առեալ Յունաց ազգէն կին,
Մեզ մոռացել է չի պահել մտքին.
Նորա եղբայրքը Մլէհ, Ստեփան,
Չեն կարող լինիլ ազգին պահապան,
Մնացելենք մեք անճար անսատար՝
Նեղութեանց մէջն եմք միշտ և անդադար,
Յոգւոց հանելով նրանց յայտնեց **Զապել**
„Թորոս Պօլսից վաղուց է փախել։“

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ.

Գերելոց համար ուրախութեան լուր՝
Է որպէս պատքեալ մարդոյ համար ջուր։
„Ս է Յ Յ Դ։“

Երբ որ **Զապելի** բերնից լսեցին՝
Թորոսի վիախուսաը սկսեցին,
Յիշեալ քահանայ և երեսփոխան,
Յուցանել յայտնի դէմք ուրախութեան,
Յոլժ զգաստութեամք դարձան առ **Զապել**,
Եռանդիւ սկսան նրանից հարցանել,
„Դժացիր ասա մեզ մէկ լուր զուրբան, (*)
Թորոսի Յունաց ձեռքից փախստեան։“
Զապել շուտով իւր տեղէն վերկացաւ,
Ձեռք քահանալին իւր ձեռքը առաւ,
Ասաց ասա ինձ տեսնեմ դու ով ես,
Պատասխանց թէ, քահանայ եմ ես,
Զապել նմա ետ զայս հարցումն իսկոյն,
„Դու քահանայ ես ահեղ բարձրելոյն։“
Տէր Տէրի գիմաց գոյնը փոխեցաւ,
Երբ Յոյն տղայի խօսքերը լուաւ,
Ասաց սա գիտէ Հայերէն խօսիլ,
Անբազգութեան մէջ կարե մեզ ձգել։
Կարծեց թէ պիտի նա իսկոյն յայտնել—
Յունաց և իրանց ՚ի կորուստ մատնել։
Զապել Տէր Տէրի ձեռը գեռ բռնած,
Ասաց իմա ես մատնիչ չեմ ծնված,
Դու տուր միմեալն ուղիղ պատասխան,
Քահանայ ես գու թէ աշխարհական։

(*) Տաճկերէն գուրբանը մատաղ է նշանակում։

Քահանայն ասաց ես այնպէս գիտեմ,
 Որ իմ Արարէին հեզ սլաշտօնեալ եմ.
Զապելը կրկնեց թէ ես քահանայ,
 Քեզանում ազգի սիրոյ հուրը կայ.
 Կամում ես տեսնել լաւ օրը ազգիդ,
 Քահանայն ասաց դու լեր միամիտ:
Զապել ասաց նրանց ես ոնց հաւատամ,
 թէ Հայք կարող են գոնեա մի անգամ,
 Այլ ազգաց նման կոչել ազգասէր,
 Ահա ես ասեմ դու լսիր հայր Տէր:
Չի տեսէր որ մեր Հայկական իշխանք,
 Ի շահ Հայերին չի ցուցին մէկ ջանք,
Լևոնին թողին կռվոյ մէջ մէնակ,
 Նրան և որդւոյն ձգին մահու տակ.
 Քահանայն ասաց ով չելլենացի,
 Ազնուաբարո՛յ, խելօք, մտացի,
 Երանի թէ քոյ աչօք տեսնայիր,
 Հաւատի եղեալ իսկն իմանայիր,
 Թէ իշխանք որոց վատութիւնն ասես,
 Հիմայ որքան են ափսոսում գիտես:
Միայն ի՞նչ անեն չեն գտնում հնար,
 Որ իրանց ցաւին առնեն դեղ ու ճար.
 Դու քոյ Աստուածդ ճշմարիտն ասա՛,
 Փախուստ Թորոսի արդեօք հաստատ ա:

Ասա գեննեմ դու սւմնից ես լսել
 թէ նա Ստամբօլից փախել է պրծել:
Զապելը մնած մեծ մտածման մէջ,
 Միտքը մարմնումը արար ել և ել,
 Ասաց Տէրտէրին քեզ ուղիղն ասեմ,
 Որ փախուստ նորա ես հաստատ գիտեմ.
 Հիմայ հասել է նա 'ի կիլիկեալ,
 Եկել է որ իւր ագին հոգի տայ.
 Յանժամ քահանան և երեսփոխան,
 Սիրով միմեանց հետ փաթթուեցան.
 Սկսան տաք տաք արտասուք թափել,
 Իրար համբոյը տալ սիրոյ և ասել—
 Արդեօք կուլի՛ որ մեք արժանանանք,
 Թորոսի տեսոյն և վարենք լաւ կեանք.
 Ո՛վ պիտի տեսնայ այդ երջանկութիւն,
 Որ է բոլոր Հայ սրտից ցանկութիւն:
Զապել տեսնելով նոցա հրճուանքը՝
 Ասաց կարող էք զոհել ձեր կեանքը՝
 Եթէ Թորոսին ձեր աչօք տեսնէք,
 Ասացէք տեսնեմ՝ լետոյ ի՞նչ կանէք:
 Քահանան տուաւ պատասխան ասաց.
 Որդի՛ սիրական ուղիղը իմաց.
 Եթէ Թորոսին աստ աչօք տեսնամ,
 Նոյն ժամալն տասն հազար զօրք կտամ:

Զապելը ասաց տեսնում եմ ես,
 Որ դու Հայկական իսկ քահանայ աես,
 Գիտեմ կամում ես միշտ քոյ ազգին շահ,
 Պիտում է լինիս և խորհրդապահ.
 Իմա թորոսն՝ ի կիլիկիայ է,
 Գուռ հաւատացիր և խօսքիս նայէ.
 Հիմայ պիտոյ՝ է ամենից աղաք,
 Մէկ ծարդ ուղարկես լԱնարգաբայ քաղաք,
 Որ յատնէ Մլէհին՝ և Ստեփանին,
 Թէ **Զապել** աստ է արիք՝ ի տես նորին.
 Թէ պիտի կատարվի այս բանը փողով
 Ա՛ռ քեզ քսակ լի հինգ հազար ոսկով,
 Դ գործ դիր ցգալ այն Արքայազանց,
 Սակաւ է ասա հայը մի անել զանց.
 Չեր այս քայքայեալ սուրբ եկեղեցին՝
 Ես իմ դրամաւ կը շինեմ կը կին.
 Քահանան խոստացաւ հաստատ **Զապելին**,
 Շուտ ածել առ նա Ստեփան, Մլէհին.
Զապել քսակը տուաւ Տէր Տէրին,
 Դարձաւ, միտք բանին յայտնել թորոսին:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն Զ Ա Պ Ե Լ Ի.

Պատմութիւնն է իսկ հայելի վարուց
 Մարդկալին մտաց ուղիղ զւղեցոյց:
 „Ո է Յ Ե Ա Դ Ա Դ Ի“

Զապել կլինէր տասնը հինգ ամաց,
 Երբ Ստամբուլցոց արարին իմաց,
 Թէ կայսրն ջունաց մեծ Պերփերութէն.
 Շատ զօրօք գնայ Կիլիկիոյ վրէն,
Զապել տեսանէր իրան հօր տանից,
 Որ շատ լեզէոնք անցանեն ծովից,
 Զարդարեալ զինուք վառած զրահիւք,
 Զիավար հետևակ անչափ բազմաթիւք,
 Ամեն գունդ գնայր իւր դրօշակաւ,
 Հստ Եւրօպայու զինուրաց կարգաւ,
 Ստամբուլ սովաւ հիացեալ մնաց,
 Տեսեալ փայլումք զինուց և զօրաց,
 Բազում սովաւ էնչափ էին զբաղուած,
 Որ երեք օր էր չէին կերել հաց.
 Միայն **Զապել** չէր հազորդ այս խրախին,
 Ալ և լայր հոսէր արտասուքն աչքին,
 Ամեն դրոշակի հոգով թախծազին
 Հառաջանք յանձնէր ըստ բերման սրտին.
 Երբ Լսէր կալսէր լաղթութեանցն լուր,
 Ազգը դիմ խնդայր՝ իսկ նա լայր տիսուր.
 Երբ որ յաղթութեամբ կալսը ետ եկաւ,
 Գերագոյն փարօք՝ Ստամբուլ մտաւ,
 Ազգ Յունաց կարգեց հանդէս քաջութեան,
 Զիւյլժ ցանկային Հայոց նուաճման,

Հնչեցին փողք և նուագարաններ,
Հարին տաճարաց որածայն գանգակներ,
Զօրք մտին քաղաք բաց դրօշակօք,
Անթիւ Յոյնք յառաջ գնացին փառօք:
Երբ որ Յովհաննէս մեծ Պերփէրուժէն՝
Եմուտ ՚ի Պօլիս, նորա ետևէն՝
Ոտնաբաց զնային Հայոց գերիքը,
Մեռած սիրտները՝ դառնութեամբ լիքը.
Նախ Սըքայն Հայոց Լևոն առաջին,
Զոր տեսեալ խնդայը անգութ թշնամին,
Զկնի Սըքային Ռուբէն և Թորոս,
Աչունքը եղած՝ ծով արտասուահոս.
Թորոս թէւ էր քսան եօթն ամաց,
Գեղեցիկ տեսլեամբ՝ ըստ Հայոց քաջաց,
Բարձրահասակ էր նման Այասին,
Կենդանի պատկեր՝ Հայկայ դիւցազնին:

ԶԱՊԵԼԻ ՍԵՐԸ ԱԹ ԹՈՐՈՍ.

Թէ ամուսնեաց մէջ չկայ սէր՝
Նըանց բաղդը է անվաւէր:
,,Ս Ե Յ Ե Ա. Դ.“
Երբ այստեղ եհաս հանդէսն կայսեր,
Ուր որ Զապելի հայրական տունն էր,
Սնդ էին Յունաց իշխանաց կանայք,
Եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք,

Որք մատամբ ցուցեալ ասէին միմեանց,
Թէ այն ալեոր ծերը որ էանց՝
Լևոն արքայն է Հայոց իմացէք,
Մեր խիստ թշնամին հոգւով խնդացէք,
Այն միջահասակն է որդին Ռուբէն,
Որ շատ կոտորեց՝ մեր Յունաց ազգէն,
Բարձրահասակի անունն է Թորոս,
Սիրուն տղայ է բայց Հայ է ափսոս:
Երբ Զապել լուաւ թորոսի անունը՝
Սւերզեց նորա ամօթու տունը,
Սկսաւ բարձր ձայնիւ լալ ողբալ,
Հայրը և մայրը սկսան հիանալ,
Ամեն հարեւանք և մերձ ազգականք,
Միտ բանին գիտելոյ արարին շատ ջանք,
Թէ ընդէր ալպիսի փառաւոր օրը՝
Զապելն ընկել է տրտմութեան հորը.
Սկսան նրան տալ մխիթարանք՝
Բայց նա չի լսեց՝ որքան արին ջանք:
Այս շփոթը երբ ամենք լսան,
Շատ հանդիսականք ևս իմացան,
Ընդ կայսեր գնայը ոմն գօրավար՝
Նշանազարդ և նստեալ լերիվար,
Վեր նայեց տեսաւ զերես Զապելին,
Ու ՚ի տիրութեան էր յոյժ թանգարին.

Նոյն ժամայն նրան սիրել սկսեց, և զայտ
 Նորա պատկերը իւր սիրտը ձգեց: և զայտ
 Երբ որ հանդէսը եհաս լրութեան,
 Եւ հանդիսականք զհանգիստ դտան,
 Զօրավարը կոչեց Զապելի հայրը՝
 Ասաց պիտի լինիմ՝ քոյ դստեր այրը:
Զապելի հայրը՝ ի միջի Յունաց՝
 Երևելի էր՝ ի շարս ազնուաց. բայց մասը
 Ունէր անթիւ գանձ՝ կալուած և սպաս,
 Զօրապետն էլ չէր նրանից պակաս.
 Ինքը շատ հարուստ, ունէր մեծ համբաւ,
 Ընդ կայսերուհոյն՝ մերձաւոր ազգաւ:
Զապելի հայրը կամք տուաւ նրան,
 Իսկոյն հարսանեաց ծէսը սկսան,
 Ոչ ոք չէր նայում **Զապելի** սրտին,
 Բայց նա չէր լինում ընդէմ հօր կամքին.
 Միայն սիրում չէր նա Զօրապետին,
 Քանզի տեսեալ էր՝ վեհանձն Թողոսին:
Զկնի հարսանեաց ոէր զօրապետին՝
 Սրբեց զարտասուս աչաց **Զապելին**,
 Միայն մտքին էր Թողոսն անդադար՝
 Բայց Թողոս բանտի մէջն էր անսատար.
 Երբ լսեց թէ կայսրը Թողոսին հանեց՝
 Բանտից և իւր մօտ պաշտօնի կարգեց,

Զապել չէր կամում տեսանել նրան,
 Որ կարենայ տալ իսպառ մոռացման,
 Երկնչէր զի մի թողոսին տեսեալ,
 Պարտս ամուսնութեան սկսէ մոռանալ:
Զօրապետն իմացաւ կնոջ սրտումը,
 Մէկ ցաւ դոյ որ է դիմաց տրտումը,
 Թէպէտ չէր գիտում պատճառն իսկական՝
 Բայց կարծէր թէ է խիստ սիրոյ նշան.
 Չուզեց փորփորիլ կամ հրատարակել՝
 Այլ կամեց նրան լուելեան արձակել.
 Բայց այս միջոցին **Զապելի** ալրըն,
 Մեռաւ և մեռան իւր հայրն ու մայրն:

ԱՅՐԻՈՒԹԻՒՆ ԶԱՊԵԼԻ.

Սիրուն կինը երբ է ալրի,
 Ան ոծախալ լոցնա է անհոտ ծաղիկ վայրի:
 Անեւ այս հայրական սիրունը „Ս է Յ Ս Դ“

Զապել էր ժառանգ երկու հարսուստ տան՝
 Եղւ տէր անչափ մեծ հարսութեան,
 Նախ ի լայտ ածեց ամեն իլածն՝
 Կալվածն, գանձն, տիփ ստացուածն,
 Գործը վերջացուց՝ յետ երից ամսոց՝
 Նո տուաւ հանգիստ ամեն խորհրդոց:

Թորոսին սկսաւ սրտիւ որոնել՝
Կամում էր նրան առ ինքն կոչել՝
Երեմն կամէր իրան խորհրդին —
Մասնակից առնել՝ մեծ կայսերուհին,
Երեմն կամէր հանգիսաց միջին՝
Քաղցր երկիլ թորոսի աչքին.
Նորա միտքը առ ինքն դարձուցանել՝
Մէկ կամքը կամէր, զմիւսը խափանել:
Մինչ նա այս շփոթեալ՝ կարծեաց միջին էր՝
Ունէր այգի, որ այգեաց հոգին էր,
Նրանում շրջելիս ետես պանդուխտ մարդ,
Երեսը կարմրեց՝ եղև կարմիր վարդ.
Կամեց նրանից դեմք դարձուցանել՝
Պանդուխտը սկսաւ նրան զայս ասել.
»**Զապել** թորոսը զոր դու ես պտում,
Վազը կը տեսնես՝ նրան նաւակում,
Երբ կերթաս շրջել քոյ կալվածումն,
Զոր Պրոպոնդոսի ունիս ափումն:“

Զայս ասաց պանդուխտն իսկոյն հեռացաւ,
Զապել այս բանիւ անչափ զարմացաւ.
Հետաքրքրութեամբ նա ամբողջ գիշեր,
Տեսաւ զանազան վրդով երազներ:
Երբ որ հասաւ նա միւս առաւօտին,
Ասաց ծառայից որք մօտը կային,

Պատրաստել զճաշ յամարանոցում,
Զոր կամէր տեսնել նա ի նոյն օրում:
Տեսինք որ **Զապել**՝ ի՞նչպէս նաւակում
Տեսնում է թորոսին և ծանօթանում,
Վերջապէս հասեալ ի կիլիկիայ,
Միայն մէկ երկու հանգամանք էլ կալ,
Պիտում է նրանց ևս ձեզ յալտնեմ,
Որ ձեզ լիովին ծանօթացնեմ —
Պսակվելիցը քանի ամիս յետոյ,
Զապել՝ ի պարտէզ գնաց ման գալոյ,
Յետը չէր առել իրան թորոսին,
Յանկարծ պատահեց յիշեալ պանդխտին,
Նրանից նա բան հարցանել կամէր,
Պադուխտը նմա ասաց „այս գիշեր —
Երբ որ կէս եղևարի՝ ի պարտէզ,
Բան գոյ սրտումս կամիմ յալտնել քեզ:“
Այս բանը ասաց ծերը հեռացաւ,
Իսկ **Զապել** թէւ ետնէն վազեցաւ,
Միայն պանդուխտը նման սուր հողմոյ,
Զիմացաւ որտեղ գնաց և կամ յո՞:

Գ Ա Զ Ն Ի Փ.

Որտեղ գոյ շահաւետ գաղտնիք՝
Անդ երեք երկրայութիւն չիք.
”Ս է Յ Ա Դ“

Զապել երբ նախայն պանդխտին տեսաւ,
 շամարեալ երբէք նա չի զարմացաւ,
 Այլ զայն համարեց հասարակ դիպուած,
 Եւ նորա խօսքով ամարանոց գնաց,
 Թորոս պատահեց նմա ճանապարհին,
 Եւ միւս անցքերը անցին ըստ կարգին.
 Այլ երբ կըկին նա պանդխտին տեսաւ,
 Հոգւով և մարմնով լոյժ զարհութեցաւ,
 Պանդուխտ ով է, գիտել կամելով՝
 Ետեկից ընկատ՝ **Զապել** վազելով՝
 Միմիայն նրան հասնել չի կարաց,
 Ամենայն կերպիւ շուարված մնաց:
 Մինչ ցեղեկոյ սիրտը **Զապելին**
 Նմանում էր խսկ ալետանջ ծովի,
 Գիշերը թէւ եմուտ լանկողին,
 Միայն քուն չեկն նորա աչքերին.
 Խսկ երբ որ եհաս գիշերի կէսին,
 Հարբ քնոյ միջն տեսաւ թորոսին,
Զապելը լարեաւ անկողնիցը թէզ՝^(*)
 Հանդերձը հագաւ զնաց ի պարտէզ:
 Պանդխտին տես ալն տեղը կանդնած—
 Որտեղ որ ցերէկն էր նրան տեսած.
 Երբ որ **Զապելին** պանդուխտը տեսաւ,
 Ողջոյն ետ նմա զայս բանը ասաւ,
 (*) Թէզ Տաճկերէն վաղլաղակի ասել է:

Զապել ոա է կամք նախասահմանութեան՝
 Որ Թորոս չի մնայ ի պանդխտութեան՝
 Պիտի դառնալ նա իւր Հալրէնիքն,
 Որ անըաղդութեամբ ալժմ է լիքն,
 Նորոգէ նախնեաց կործանեալ գահը,
 Կենդանացնէ իւր ազգի շահը.
 Պիտի դու խնդրես կայսրէն հրաման՝
 Գնալ լերուսաղէմ ուխտադրութեան.
 Երբ որ հասանէք գուք լերուսաղէմ,
 Շատ փնփոխութիւնք կը լինին ձեզ դէմ.
 Որ երբէք դուք չէք անդ երկար մնալ՝
 Շուտ ի Կիլիկեալ պիտումէք գնալ: “
 Զայս ասաց անյալտ եղև պանդուխտը,
 Մեք տեսանք նոցա արարեալ ուխտը,
 Թէ որպէս նոքա լերուսաղէմ հասին՝
 Լուեալ մահ կայսեր շուարված մնացին:
 Պանդուխտը կըկին ի լերուսաղէմ,
Զապելին ետես ասաց լուր ասեմ.
 “Ի Կիլիկեալ կարողէք գնալ,
 Եւ ձեր սրտերի կամքն ստանալ
 Ցունաց զօրութիւն անդ է լոյժ ակար,
 Երկար տեսելոյ չունի երբէք կար.
 Ես առ լոտեփան և Մլէհ կերթամ,
 Զեր մասին նրանց աւետիս կտամ,

Զի նոքա ծածուկ լինիցին պատրաստ,
 'ի գալ Թորոսին լիցին նմա նպաստ.
 Որ դժուարութիւն Թորոսը չի զգայ
 Երբ որ Հայրենեաց տիրել կամենալ,
 Ո՞ր օր Կիլիկեայ բարեաւ հասանէք՝
 Մլէհ, Ստեփանին պիտի ծանուցանէք,
 Թէ Զապել եկեալ կամի ձեզ տեսնել՝
 Զայս հաւատարմի պիտումէք յանձնել՝
 Ես նրանց կասեմ թէ Զապելն ով է՝
 Չեր Կիլիկեայ գալն ի՞նչ մտքով է.
 Նոքա այս բանը լիովին կիմանան,
 Ինչ հարկաւոր է պատրաստ կունենան,
 Քեզ միայն կմնայ քոյդ Հարստութիւն,
 Շախել Հայրենեաց գտնել փրկութիւն։
 Պանդուխտը տուած խօսքը կատարեց,
 Մլէհին, Ստեփանին տիփ իմաց արեց,
 Թէ Թորոս բանտից վաղ է ազատվել՝
 Եւ ընդ Զապելին պսակօք կապվել,
 Թէ գալիս է նա 'ի Կիլիկեայ,
 Ոսկով երծաթով բեռները լի ա։
 Երբ Լևոն ընդ որդւոց իւրոց գնաց գերի,
 Հասակ Մլէհի և Ստեփանէի,
 Միոյն տասն չորս միոյն տասնուհինգ—
 Եր երբ պատժեց նրանց թիւը երկինք.

Մէկ Հալ իշխան նրանց տեսեալ անսատար՝
 Եւ թէ Յոյնք նրանց չպիտի տան դատար,
 Առեալ ընդ ինքեան տարաւ 'ի Զելթուն,
 Որ ունի Հայերէն Ուլնիալ անուն,
 Նորա անառիկ և անմատչելի՝
 Սարերի և շատ խիտ անտառների,
 Միջին Հայրօրէն եղեւ պահապան՝
 Բայց երբ որ մեռաւ այս թանգ Հալ իշխան,
 Մլէհ, Ստեփան մնացին անտէր,
 Բայց մէկ քահանայ նրանց յոյժ սիրէր,
 Օգնումէր նրանց անչափ ծածկաբար,
 Զի Յունաց ազգի ձեռից չունէր ճար:
 Երբ Զապել Թորոս Սաղիմալ ելին,
 Մլէհ, Ստեփան սարերից իջին.
 Յայտնեցին նոքա Հալ երիտասարդաց՝
 Թէ Թորոս գանձիւք վասն Հայրենեաց՝
 Դայ ի նորոգել իւր նախնեաց աթոռ,
 Թէ և չէին Հայք վատ երախտամոռ,
 Բայց տեսանէին չկալ մէջ տեղ փող՝
 Զի նա է ամեն կերպ բան կատարող.
 Զի կարացին նրանց հետ միաբանիլ՝
 Յունաց չարութեան ձեռն անկանիլ:
 Այս գրութեան մէջ Մլէհ, Ստեփանէ՝
 Յուարված մնացին, որ յայտնի բան է՝

Բայց երբ քահանայն իւր եօթն որդւով՝
 Զեդ սրընթաց նետ հասաւ նրանց քով,
 Ասաց Մլէհին և Ստեփանէին՝
 Թէ Զապել որ է իրանց եղբօր կին,
 Եկեալ է կամի նրանց տեսանել,
 Սկսան հինգ հազար ոսկին բաժանել,
 Ֆողովեցին մինչ ցտասն հազար հոգի՝
 Հասին 'ի գիւղ, ուր էր աւեր եկեղեցի՝
 Նշանակեալ օրը Զապել Թորոսին—
 Առեալ ընդ քանի՛ ծառալից գնացին,
 Հասան աւերված եկեղեցւոյ մօտ՝
 Երբ տեսին միմեանց եղբայրքն կարօտ՝
 Նոլն ժամալն անկան իրար վզովն,
 Արտասուեց ով որ կալր նրանց քովն,
 Մլէհ, Ստեփանէ հարսն Զապելին՝
 Եղբայր կոչեցին փոխան Ռուբենին,
 Զապել գնաց անդ ուր տասն հազար—
 Հայք սպասէին նմա ծածկաբար,
 Նոքա կարծելով թէ Թորոսն է նա,
 Թորոս, Թորոս կոչեալ լիզեցին նրա,
 Գլխիցը բռնած մինչի ոտները՝
 Փանզի չափ չունի Հալրենեաց սէրը՝
 Զապել աչքերը արտասուօք թացված՝
 Հայազգի զօրաց արար նա իմաց՝

Թէ թէև նման է՝ նա իւր Թորոսին՝
 Բայց Թորոս չէ այլ է՝ նորա ամսւսին.
 Զայս ասաց և եբաց բերան քսակին՝
 Բոնով և ափով բաժանեց ոսկին.
 Հայ երիտասարդք սկսան գօռալ՝
 Կեցցէ Տէր երգեցին՝ Թորոսին տեսեալ,
 Զիրաւունս նորա շուտ ընդունեցին՝
 Իրանց եռանդը նոյն օրը ցուցին.
 Տէր Տէրը զգեստով խաչվառը ձեռին՝
 Նախընթաց եղեւ Հայոց զօրքերին.
 Կախ առին աւրած տաճարի գիւղն՝
 Յոյնք փախեան իսկոյն տեսեալ զերկիւղն.
 Միմչ ցմէկ ամիս այն օրից սկսած՝
 Կիլիկեայ մէկ Յոյնու նշան չի մնաց.
 Թորոս և Զապել սէր միաբան
 Ոուբենեանց ազգի աթոռը նստան:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Պ Ն.

Ամեն առարկի լուծումն՝
 Է պատմութեան աւարտումն՝
 „Ս է Ց Ա Դ“

Զապելի հասակն պատանեկութեան՝
 Եւ զեղեցկութիւն նորին աննման՝
 Անսահման սէրը իրան ամուսնոյն՝
 Եւ հարստութեան կերպն գոյն զգոյն՝

Երան պատիւը՝ ի միջի Հայոց՝
 Եւ առողջ դրութիւն նորա կազմածոց՝
 Գուշակում էին որ Զապել պիտի՝
 Մինչև իսորին ծերութիւն ապրի,
 Եւ վայելէ տիփ բարիքն աշխարհի,
 Առանց տրտմութեան լոյժ երկար տարի:
 Միայն աչալուրջ մարդիք հասկացան՝
 Ու գէմք Զապելի ամսով ծածկեցան,
 Միայն պատճառն էր անիմանալի՝
 Եւ Հայոց սրտին էր լոյժ զգալի.
 Զէր լիանում նա (Զապել) տեսեալ Թորոսին՝
 Անլադ Հայեր միշտ նորա երեսին,
 Երբեմն գոլով ընդ նմա նստած՝
 Մատն սպիտակ քողով փաթթած.
 Սրեր զարտասուս իրան աչքերի,
 Ու նման էին խոշոր մարգարտի:
 Մէկ երեկոյ նա իւր Թորոսին՝
 Խօսէին նստեալ պարտիզի միջին.
 Մայիս գիշերի մեղմ եղանակն՝
 Էր նրանց կենաց բարի գուշակն.
 Երկինքը պայծառ, Լուսին չի ծագած՝
 Աստղերի լոյսը լոյժ պայծառացած՝
 Զապել նայեցաւ դէպի երկինքը՝
 Քաղցրութեամբ ասաց Թորոսին ինքը.

Արգեօք տեսնում էս Թորոս ալն աստղը՝
 Ու լուաւոր է քան զլոյս աստղը, (*)
 Թորոս երբ ցուցեալ աստղին նայեցաւ՝
 Մէկ ոտանաւոր իւր միտքը անկաւ՝
 Ու չի գիտէր թէ ինչ տեղ է լսած,
 Փոքր ինչ մտածեց հուսկ լետոյ ասաց.
 „Աստեղք լուսափալ՝ աստեղք շողոջուն,
 ՚ Հիւզ մենաւոր ցայտեն լոյս փալուն,
 Անդ չքնաղ դշխոյ ընդ խոշոր խորդով,
 Աքողէ զիսոց ոսկւով մարգարտով:“
 Զապելը ասաց ամուսնոյն թորոս՝
 Սրամիտ ես բայց չգիտես ափսոս,
 Ու այն լուսաւոր աստղը զոր տեսեր
 Նա իմ վերջացած կենաց աստղն էր,
 Ու այս գիշեր նա երկնային տանը՝
 Պիտի լրացնէ իրան շրջանը:
 Զայս ասաց բռնեց Թորոսի ձեռքից՝
 Համբուրեց զնա, շարունակեց ետքից՝
 Ասաց Թորոս ուր որ ուզեմ զնալ՝
 Արգեօք կը կամիս դու էլ հետս զալ:
 Թորոս զարամացաւ Զապելի խօսքով՝
 Մանաւանդ նորա օտար շարժմունքով՝
 Ու նստած գոլով նորա գրկումը՝
 Թոթուար իրու թուչունն օգումը.

(*) Լոյս ասաղ ըստ սամհաց Հայոց է անուն լուսարելի:

Սսաց Զապելին միթէ դու չէիր,
Որ զիս ՚ի Պօլսից Հայաստան բերիր,
Երբ ասացի քեզ թէ հետդ չեմ դալ՝
Միթէ կարող ես սրանց մոռանալ:

Զապել և Թորոս գնալ սկսան՝
Զապել քանից ջերմ յոդւոց եհան՝
Թորոս հարցըուց նորա պատճառն,
Զապել պատասխան ետ նմա դառն,
Թէ Թորոս միթէ նախասամանութեան՝
Կարգը չի լինիլ տալ փոփոխութեան,
Թորոս պատասխան տուաւ **Զապելին**՝
Որքան արարած որ դոյ աշխարհին,
Նախասահմանութեան տիփ են հնագանդ՝
Ուր նորա կամքն է արարածք են անդ:

Զապել կոչեց վայ և կանգնեց յոտին,
Եփոթեալ լեզուաւ ասաց Թորոսին,
Այդ ի՞նչ բան էր որ ինձի ասացեր,
Իմ դատակնիքս դէմքիս կարդացեր,
Ես կարծում էի թէ դու անարգել՝
Թէ ոք կամենայ զիս ՚ի քէն իւլել՝
Դու պիտի նրան խիստ ընդիմանաս,
Զիս ազատելոյ ՚ի մահ ընթանաս.
Հիմա ասում ես նախասահմանութեան՝
Պիտի կատարվի կամքը անխափան,

Ուրեմն նա որ իմ աստղն եցոյց . . .
Եւ ուրախ սիրտս տրտմութեամբ լցոյց,
Նա ինքն իմ ձեռօք իմ Հայոց ազգին՝
Տուաւ կորուսեալ իրաւունքն անգին,
Ես կրկին տեսի իմ հայրենիքս՝
՚ի կատար հասոյց բոլոր կարծիքս:

Թորոս ասաց դու Պօլիս չի դարձար,
Քոյ հայրենիքդ ի՞նչպէս տեսար,
Զապելը ասաց Ստամբօլը չէր—
Իմ հայրենիքս՝ միմիալն Սիս էր,
Ես ՚ի Ստամբօլ Փողձութեամբ գնացի՝
Եւ այսքան տարի անդ պանդուխտ մնացի.
Մի՛ վիրաւորվիր դու իմ խօսքերով՝
Որ հիմայ պատմել կամիմ քեզ կարգով.
Գիտեմ շատ արտասուք պիտի հեղանին՝
Երբ բացատրեմ միաքը այս բանին:

Երբ զիս խոցեցեր ձգեցեր ջուրը՝
Աչքերը ծածկեց մահու վարագուրը՝
Զի կարաց ջնջել կերպդ իմ սրտէս՝
Որ տեսեալ էի երես առ երես:

Եօթը տարեկան էի երբ տեսի՝
Յետ այնու մնացի ջըոյ երեսի,
Զկնորսները զիս հանեցին ջըէն՝
Ճարեր շաղ տուին իմ խոցիս վրէն,

Յետոյ ծախեցին վաճառականի՝
Որ մէկ հարուստ մարդ էր Յունաստանի,
Իւր հարստութեան արար զիս ժառանգ՝
Բնութեամբ լոյժ խոնարհ էր և անվտանգ:
Թորոս. Երբ կայսրն եկն ՚ի Կիլիկիայ՝
Ես սուզ արարի հայրենեաց վերալ՝
Երբ որ քեզ բերին ՚ի Պօլիս գերի՝
Էն օրն անցուցի ողբով անթերի.
Երբ որ քեզ տեսի ես ՚ի ողջութեան՝
Ապրեցի որ քեզ լինիցիմ արժան.
Գտի քեզ և ինչ որ սրտումս կայը՝
Բոլորը տեսի, ունելով քեզ ալը.
Այժմ իմ սրտի փափազն հանգստեան:
Նա է որ տեսնես տեղը իմոյ ծննդեան:

Յետոյ Հասին մէկ կիսատապալ տան՝
Միատեղ ներքսե մտին և տեսան,
Մէկ ծեր մարդ և մէկ պառաւ կին նստած՝
Իրանց առաջին մէկ մախը գրած:

Երբ Զապել ետես զայն կինն պառաւ՝
Գիրկը անկաւ և ձեռը ձեռն առաւ,
Ասաց ճանաչիր Եղիսաբէթիդ.՝
Որ կամի մեռնել ահա քոյ մօտիդ.
Յետոյ սկսեց յայտնել իւր սէրըն՝
Լիզել պառաւի թառամ ծըծերն.

Յանկարծ ներս մտաւ մէկ անծանօթ մարդ,
Զապելը նախեց այն մարդին հանդարտ՝
Ճանաչեց որ այն պանդուխտն է ասաց
Թորոս սա էր որ մէզ շաւիդ եթաց
Մեզ մէկս մէկու ճանաչացը ընւց,
Եւ վերջը զմեզ այս տեղ հասցը ուց,
Թորոսը նախեց պանդիտի գէմքին՝
Ասաց այս մարդոյ կերպն է իմ մտքին,
Եգիպտացի ճգնաւորն է սա՝
Ասաց Հայը Սուրբ ճշմարիտն ասաւ,
Դու չէիր որ մեզ գուժ գուշակեցեր՝
Մեզ Յունաց ձեռքը գերի ձգեցիր:
Ճգնաւոր ասաց այս ես էի՝
Որ ձեր վիճակը վազուց գիտէի՝
Հիմայ եկելեմ որ ձեզ ցուցանեմ,
Իմ ասածները ապացուցանեմ,
Այս այն աղջիկն է որ գուշակեցեր՝
Եւ յետոյ ջրոյ մէջը ձգեցեր՝
Այն լոյժ փալողը սորա աստղն է տես՝
Եւ այն պատճառաւ գուշակեցի ես—
“Աստեղք լուսափալ աստեղք շողշողուն,”
Ահա այս տունն էր որ ես պատմեցի—
“Ի հիւզ մենաւոր ցայտեն լուս փալուն.”
Այս սիրուն Զապելն էր որ ասացի—

„Անդ չքնաղ գշխոյ՝ ընդ իսուոր խորդով,“
 Յետ այնու եբաց Զապելի ծոցը՝
 Յոյց տուաւ նորա զարհուրելի խոցը՝
 Որ սկսելէր զայրանալ կրկին՝
 Ասաց վասն այն ասացի այս կին—
 „Սքողէ զիսոց՝ ոսկւով, մարդարտով:“
 Ճգնաւորը երբ այս բանը ասաց,
 Յանկարծ նա անլայտ եղեւ և գնաց.
 Թորոս ետևէն նայել կամեցաւ՝
 Բայց լիշեալ աստղը յանկարծ ջուրն անկաւ.
 Ուր որ տասն ու հինգ տարի նախ քան զայն՝
 Զապելին խոցեալ ձգեաց ի ջուրն այն:

Այս պատահմունքի միջին խառնուած՝
 Զապել դէմքը մօր ստեանց մէջ դրած՝
 Անշունչ էր եղել գոյնը թառամեալ՝
 Աչքերը մթնած ըերանը բացեալ՝
 Ատամները զեղ մարդարիտ սպիտակ՝
 Բաց փայլում էին՝ որպէս արեգակ:

Դեռ ևս անցել չէր տասն ու հինգ օր,
 Ալնտեղ կառուցին՝ մէկ մահարձան նոր,
 Որոյ տակն կալր՝ երեք գերեզման՝
 Մէկը ձկնորսին մէկն իրան կնկան,
 Նրանց միջին էր հանգիստ Զապելի՝
 Որ հայոց համար՝ էր յոլժ լարդելի:

Մէկ երիտասարդ ամենայն զիշեր՝
 Այն մահարձանի ոտքը գալ զիտէր՝
 Եւ անդ աղօթէր տաք տաք և երկայլ՝
 Կոչէր, հառաչէր, կակծալի լայր,
 Իսկ երբ կամում էր առնել անդի դարձ՝
 Զայս երգն երգէր նա միշտ առ Աստուած—
 „Զմեղս մանկութեան և անգիտութեան—
 Տէր իմ՝ արժանի արա թողութեան,
 Եւ լիշեալ զիս դու՝ ըստ քոյդ գթութեան՝
 Զի հայր ուղղութեան ես և քաղցրութեան:“

Վ Ե Ր Զ :

Այս վէպը պատմական ոճիւ հրատարակված էր «Արարատ» անուն
 Հայոց լրագրի միջնն բայց ես ՚ի չափարերական ձեւ զարձուցի զնա վասն Հա-
 յոց գեռահասաց՝ ովք առաւել սիրեն զամն չափարերակոն քան թէ պատմա-
 կան կամ սոսկ:

Ծանօթ. Ալ Յե Ա. Գիւ,

Դմէջք մրտննա բզուսամիզմ թէ՛լ
Դմէջք յար ցգոս ժմանձուսն առ
Պլանիզ և գոս գոս վէճօրս քմա ոչ
Եղան կը ածիս ովհանար ովհան
Նկար հրեա յմաս ոչ նունչ պյա բա՛
Ճաւառուն առ ուշին առ պէրդմ մրդ սըսն
Առաջնորդքուն և Առաջնորդքուն որմին
Առաջնորդքուն նուս ժմանչոս նու ովհ
Առաջնորդք բյագ ուոց նոր ովհ նուշի ոչ
Առաջնորդք և առ Առաջնորդքուն պլու ԱՌ

Ք Դ Ի

Առաջնորդք ովհ Նախանշանական այս մայն նուս ովհ առ
առ առաջնորդք ովհ առաջնորդքուն և առ պլու մահան մարտու պարա
առաջնորդք առ առաջնորդքուն առ առ ովհ ուստահուն ովհ պար պար
պար պար պար պար

17154-17158

X
G
H
X
m
3
d

2013

